



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ	1
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ	2
ԿՐԹՈՒԹԻՒՆԸ՝ ԱՊԱԳԱՅԻ ԳՐԱԻՎԱԿԱՆ	2
ՀԱՐՑԱԶՐՈՅՑ	5
«ԵԹԷ ՄԵՆՔ ԱԶԳ ԵՆՔ ՈՒ ՄԵՐ ԱԶԳԱՅԻՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆԸ ՊԷՏՔ Է ՄՈՌԱՑՈՒԹԵԱՆ ՏԱՆՔ, ՈՒՐԵՄՆ՝ ՍԱ ՆՈՐ ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ ԿԸ ՆՇԱՆԱԿԷ» ԱՇՈՏ ՄԵԼՔՈՆԵԱՆ 22/4/2024.....	5
ԿԻՊՐԱՀԱՅ	6
ՀԱՄԱԶԳԱՅԻՆԸ ՊԱՏՈՒԵՑ ՎԱՍՏԱԿԱԻՈՐ ԿՐԹԱԿԱՆ ՄՇԱԿՆ ՈՒ ՏԱՂԱՆԴԱԻՈՐ ԱՐՈՒԵՍՏԱԳԷՏ ՎԱՐԴԱՆ ԹԱՇՃԵԱՆԸ.....	6
ՅՕԴՈՒԱԾՆԵՐ	11
ԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԸ, ՅԵՏ ՄԱՀՈՒ ԹԷ՞ 11	11
ԱՌ ԿԵՆԴԱՆՈՒԹԵԱՆ ԿԸ ԳՆԱՀԱՏՈՒԻՆ 11	11
ԵԿԵՂԵՅԻՆ ԴԵՐԸ ՊԵՏԱԿԱՆԱՇԽՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ 15	15
ԳՈՅՈՒԹԵՆԱԿԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՅԵՐ 17	17
ԴԱՍՏԻՐԱԿՈՒԹԻՒՆՆ ՈՒ ՄԵՐ ՊԱՏԱՆԻՆԵՐԸ..... 20	20
ՀԱՅԵՐՈՒ ԹՐՔԱՅՈՒՄԸ ԵՒ ՔՐՏԱՑՈՒՄԸ ԺԱՄԱՆԱԿԻ ԸՆԹԱՅՔԻՆ..... 22	22
ՏԵՍԱԿԷՏ	24
ՈՒՐԿԷ՞ ՄԵԶԻ ԱՅՍՔԱՆ ԱՏԵԼՈՒԹԻՒՆ..... 24	24
ՊՐԻՄՄԱԿԷՍ 27	27
ՍՊԱՍՈՒՄ ԵՒ ԼԱԻԱՏԵՍՈՒԹԻՒՆ 27	27
ԹՈՒՐՔԵՐԸ ՀԱՅԱՎԱՍԽՈՒԹԻՒՆԸ - «ԹՈՒՐՔԵՐԻ ՀԱՄԱՐ՝ ԳՈՅՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆԸ ՀԱՅԵՐԻ ՉԳՈՅՈՒԹԻՒՆ Է»..... 29	29
ՄԻՆՉԵՒ Ե՞ՐԲ 30	30
ՍԱՀՄԱՆՔ ՔԱԶԱՅ ԶԷՆ ԻՒՐԵԱՆՑ..... 32	32
ԳՐԱԿԱՆ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ	34
ՓՈՒՆՋ ՍԸ ՔԵՐԹՈՒԱԾՆԵՐ՝ ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆԷ 34	34
ԸՆԹԵՐՅԵԼՈՎ ՎԱՐԴԱՆ ԹԱՇՃԵԱՆԻ «ՆԱՄԱԿԱՆԻ Յ. ԳԵՂԱՐԴԻ ՀԵՏ» ԳԻՐՔԸ 40	40
ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆԻ ԳՈՒՆԱՇԽԱՐՀԸ..... 42	42
Ընթերցելով Երանի գրքերը: 42	42
ՏՊԱԻՈՐՈՒԹԻՒՆ 45	45
ԶԱԻԷՆ ԳՐԻԳՈՐԵԱՆԻ «ՈՂԲԵՐԳ ԼԻԲԱՆԱՆԻ ԴԺՈՒՄՅՈՒՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ» ՀԱՏՈՐԸ 45	45
ՎԱՀԱՆ ԿԱՐԱՊԵՏԵԱՆԻ..... 47	47
ԽՆԿԵԼԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ..... 47	47

ԱԿՆԹԱՐԹՆԵՐ 49

ՔԱՌԵԱԿՆԵՐ..... 52

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԿՐԹՈՒԹԻՒՆԸ՝ ԱՊԱԳԱՅԻ ԳՐԱԽԱԿԱՆ



Կրթական տարեվերջի այս օրերուն, երբ հայրենի ու աշխարհասփիւռ դպրոցներէն շրջանաւարտ՝ հայ պարման-պարմանուհիներու նոր հունձք մը կ'ընծայուի կեանքին, հայ կեանքին ի մասնաւորի, մեր մտածման սելեռակէտը կ'ուղղենք դարձեալ կրթութեան գերագոյն խնդրին, քանզի կրթութիւնն է վստահաբար գերագոյն ազդակը ժողովուրդի մը, ազգային հաւաքականութեան մը

յառաջդիմութեան ու զարգացման: Անոնց յարատեւումին պատմութեան մէջ, անոնց վերածնունդին:

Յարափոփոյի ժամանակներու եւ պայմաններու լոյսին տակ, կրթութեան յղացքն ու համակարգը կը վերամեկնաբանուին ու կը վերարժեւորուին շարունակաբար, դառնալով կիզակէտը հաւաքական բուռն քննարկումներու եւ բանավեճերու, մասնայատուկ խորհրդածողովներու կամ սեմինարներու, քանզի անկարելի է մտածել ապագային մասին, առանց կրթութեան:

Հելլենական քաղաքակրթութեան վաղ ժամանակաշրջանին, իմացութիւնը կը սահմանուէր որպէս առաքինութիւն: «Knowledge is virtue» Լուսաւորութեան Դարաշրջանէն սկսեալ եւ արդի ժամանակներուն հետ համընթաց, իմացութիւնը տակաւ սկսաւ առնչուիլ գիտական եւ արհեստագիտական ներուժի զարգացման հետ գերազանցօրէն, եւ դարձաւ հիմնական ազդակը տնտեսական բարգաւաճման, ինչպէս նաեւ՝ բանական ու կազմակերպուած, օգտապաշտ ու ժողովրդավար ընկերութեան մը կառուցումին: Մարդկային միտքն ու մարդուն իմացութիւնը լաւագոյնս օգտագործելն ու արդիւնաւորելը դարձած են քսանմէկերորդ դարու մարտահրաւերը: Կարծէք սկսած է իրականութիւն դառնալ մեծ քաղաքագէտ Ուինսթըն Չըրչիլի կանխատեսումը, թէ՛ ապագայի կայսրութիւնները մտքի կայսրութիւններն են: Այս կը թուի ըլլալ այժմեական, արդի յղացքը կրթութեան. մարդկային մտապաշարի կամ գիտելիքի ձեռքբերումը եւ անոնց առաւելագոյն օգտագործումը յանուն սպառողական քաղաքակրթութեան մը պահանջներուն:

Հարց կը ծագի անմիջապէս, թէ կրթութեան նման ըմբռնումը արդե՞օ՞ք պիտի կարենայ ստեղծել իսկապէս արժէքաւոր ընկերութիւն մը, որ հիմնուած ըլլայ ոչ միայն ՀԱՅԻՒ



ապրելու կարիքի բաւարարումին, այլեւ ու մանաւանդ՝ ՀՈԳԵԻՈՐ-ԲԱՐՈՅԱԿԱՆ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ արժէքներով ապրելու էական պահանջքին վրայ: Թէ արդեօ՞ք՝ կրթութեան նման օգտապաշտ եւ նիւթապաշտ ըմբռնումը, պիտի չհնարաւորէ՞ ի վերջոյ, որ մարդկային շահամոլութիւնն ու եսամոլ կիրքերը, գործելով անարգել, շրջէն բանականութիւնը իր հակաբեւեռին՝ անհեթեթ ու անգուշակելի իրականութեանց գիրկը: Վերջին տասնամեակներու փորձը՝ պատերազմներ ու տնտեսական տագնապներ, ահաբեկչութիւն ու ոճիր, զանգուածային բնաջնջման զէնքերու սպառնալիք..., իրենց ամբողջ ահաւորութեամբ, կը յուշեն յստակօրէն, որ կրթութիւնը շատ աւելին ըլլալու է, քան գիտելիքներու ստեղծումն ու կուտակումը, աւելին՝ քան գիտական մտքի աճը, աւելին՝ քան գիտահնարքներու սրբնթաց, հրաշքի համազօր ստեղծումն ու տարածումը...: Աւելին՝ նոյնիսկ, քան՝ արհեստական բանականութեան հրաշալիքը:

Որքան ճիշդ կը հնչէ 18-րդ դարու ֆրանսացի մտածողին խօսքը՝ «Գիտութիւնը առանց խիղճի՝ հոգիի կործանում է սոսկ»: Արդարեւ, կրթութեան եւ իմացութեան հիմքերու հիմքը ինքնաճանաչումն է, Սոկրատեսեան «ՄԱՆԻՐ ԶՔԵԶ»ը: Սա կ'ենթադրէ որոշապէս, որ մարդ էակը թէ ազգային հաւաքականութիւնը տեւաբար գիտակից պիտի ըլլայ, թէ ո՞վ է ինք, ո՞ր կէ կու գայ եւ ո՞ր կ'երթայ: Մտքի իր տեսադաշտէն հեռացնելու չէ երբեք այն գերագոյն, վախճանական նպատակները, որոնք իմաստ, արժէք ու նպատակ կու տան մարդկային կեանքին, մարդը մարդացնող բարոյական-հոգեւոր այն վսեմ սկզբունքներուն ու իտէպլներուն, որոնք պիտի ուղղորդեն իր կեանքը, տեսլական պիտի հաղորդեն անոր, գոյիմաստ ու գոյապատճառ պիտի հանդիսանան:

Գիտութեան յառաջդիմութեան հետ համընթաց, հոգեւոր-բարոյական-մշակութային արժէքներու կենսունակութիւնը էական նշանակութիւն ունի մարդ-անհատին եւ հաւաքականութեան համար, եթէ չուզէր ան դառնալ մարդ-մեքենայ, սպառողական քաղաքակրթութեան հսկայ մեքենային մէկ պտուտակը լոկ, զուրկ՝ անհատականութենէ, ինքնուրոյն դիմագիծէ, կեանքը առաջնորդող իտէպլներէ...

Մեր փոքր ածուին՝ հայոց աշխարհին համար ալ, ի Հայաստան, Արցախ եւ Սփիւռք, կարելոր է, անտարակոյս, որ մեր տեղն ու դերը նուաճենք՝ տակաւ ձեւաւորուող «իմացական հասարակութեան» մէջ, գիտելիք ստեղծող, արագ ու ճիշդ կազմակերպուող ընկերութեան մէջ, մեր գիտական-արհեստագիտական իրագործումներով եւ ձեռքբերումներով, մեր ճարտարարուեստի եւ այլ բնագաւառներու նուաճումներով...: Այս բոլորով հանդերձ, սակայն, հարց տալու չէ՞նք, թէ ինչի՞ կը վերածուինք մենք՝ որպէս ինքնուրոյն ազգ ու երկիր, եթէ չպահպանենք եւ չվերակերտենք, չվերանորոգենք եւ չկենսաւորենք մեր արժէքային համակարգը, մեր ինքնուրոյն դիմագիծը ներկայացնող հոգեւոր-մշակութային արժէքները՝ հայոց Մեծաքանչ լեզուն, գիրն ու գրականութիւնը, երգ-երաժշտութիւնը, ճարտարապետութիւնն ու նկարչութիւնը..., որոնք մեր ինքնութիւնն են, սեփական աշխարհընկալումը, հոգեբանութիւնն ու ճաշակը, ազգային նկարագիրն ու դիմագիծը ցոլացնող ոճը, առանց որոնց մենք կը դադրինք ՀԱՅ ըլլալէ, որքան ալ յառաջդիմենք ու հզօրանանք՝ տնտեսապէս, գիտականօրէն եւ նոյնիսկ ժողովրդագրական տուեալներով...:



Կրթութիւնը անպայմանօրէն պիտի ըլլայ ՀԱՅԵՏԻ ԿՐԹՈՒԹԻՒՆ, ազգային ինքնաճանաչում կերտող, ազգային գիտակցութիւն դարբնող, հոգեւոր-մշակութային արժէքներ եւ ազգային գաղափարական փոխանցող, անոնց նկատմամբ խորունկ պատասխանատուութիւն թրծող, եթէ պիտի յարատեւենք որպէս հայոց ազգ ու հայոց երկիր...:

Տարիներ առաջ, հայ դպրոցին տուած իր այցելութեան առիթով, բանաստեղծ Գեորգ Էմին այնքան յատկանշականօրէն կը գրէր դպրոցին ոսկեայ Յուշամատենին մէջ. «Հայոց լեզուն, գիրն ու գրականութիւնը, հայոց պատմութիւնը... սոսկ դպրոցական առարկաներ չեն, այլ՝ մեր գոյութեան եւ գոյատեւման հիմքը... անոնցմէ է կախեալ մեր լինել-չլինելու խնդիրը, մեր գոյութիւնն ու մեր ապագան»: Պիտի լսե՞նք այս իմաստալից պատգամը հայ բանաստեղծին, թէ՞՝ օտարամոլութենէ տարուած, պիտի կրկնենք շատ մը հայ ծնողներու տխուր խրատը իրենց գաւակներուն. « Հայերէնը կարելոր չէ. միւս դասերդ սորվէ, որպէսզի յաջողիս...»:

Հայերէնը, անով ջամբուած հայեցի կրթութիւնը կրնան շահութաբեր չըլլալ՝ ներկայ նիւթապաշտ եւ օգտապաշտ աշխարհին մէջ: Բայց անոնք մեր հարագատ ինքնութիւնն են, հայ հոգին ու ոգին: Պիտի հրաժարի՞նք մեր ինքնութենէն, մեր հայկականութենէն: Ի՞նչ պիտի արժէր, արդարեւ, նոյնիսկ ամբողջ աշխարհը շահիլ, բայց հոգին կորսնցնել...: Սա չէ՞ խորիմաստ, հին բայց երբեք չհինցող պատգամը՝ Մեծագոյն Մատենին մէջ արձանագրուած:

Կրթութիւնը կ'ըլլայ ճշմարտօրէն ազգի ապագայի գրաւական, եթէ անիկա ներդաշնակօրէն կարենայ համադրել իր մէջ՝ գիտական մտքի զարգացումը, իմաստութիւնը, մարդկային եւ ազգային ԻՆՔՆԱՃԱՆԱՉՈՒՄ եւ ԳԻՏԱԿՑՈՒԹԻՒՆ փոխանցող հոգեւոր-մշակութային արժէքներու ընկալումն ու ճաշակը: Անոնց կենսունակ պահպանման նկատմամբ խոր յանձնառութիւնը: Նոյնիմաստ պատգամ մը չեն փոխանցե՞ր արդեօք՝ 5-րդ Ոսկեդարու ոսկի խօսքերը մեր Թարգմանչաց Հայրերու. «Ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ, Իմանալ զբանս հանճարոյ»: Պատգամ՝ որ դարձաւ, նշանակալից կերպով, հայերէնի թարգմանուած առաջին նախադասութիւնը:

Հին բայց չհինցող, իրենց այժմէականութիւնը պահած տողեր, որոնց մէջ է թաքնուած որոշապէս՝ ազգի ու հայրենիքի վերածնունդի շունչը, յատկապէս ներկայ ճգնաժամային օրերուն:

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

ՀԱՐՑԱԶՐՈՅՑ

«ԵԹԷ ՄԵՆՔ ԱԶԳ ԵՆՔ ՈՒ ՄԵՐ ԱԶԳԱՅԻՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆԸ ՊԷՏՔ Է ՄՈՌԱՅՈՒԹԵԱՆ ՏԱՆՔ, ՈՒՐԵՄՆ՝ ՍԱ ՆՈՐ ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ ԿԸ ՆՇԱՆԱԿԷ» ԱՇՈՏ ՄԵԼՔՈՆԵԱՆ 22/4/2024



Գիտութիւններու ազգային ակադեմիայի պատմութեան հիմնարկի տնօրէն, պատմաբան Աշոտ Մելքոնեանի համաձայն, անկարելի է գտնել ու ամբողջացնել Հայոց ցեղասպանութեան զոհ գացած 1,5 միլիոն անմեղ զոհերուն անունները, ինչպէս Հայաստանի Հանրապետութեան իշխանութիւնը կ'ըսէ:

«Առհասարակ կարելի չէ, քանի որ ցեղասպանութենէն ետք 4-

5-րդ սերունդը հիմա կ'ապրի, գտնել, թուաքանակ պարզել, ուղղակի անկարելի է: Ժամանակին ատիկա կարելի էր՝ Հայոց ցեղասպանութենէն անմիջապէս ետք, ինչ որ, օրինակ, ըրած են Եռհաննես Լեփսիուսը կամ ուրիշներ: Այդ ժամանակ որոշուած է, որ 1915 թուականին խօսքը կը վերաբերէր 1 միլիոն 350 հազար նահատակներու, իսկ 1916 թուականին ընդհանուր թիւը՝ Տէր Զորի, Ռաքքայի եւ այլ վայրերու մէջ, անցած է 1,5 միլիոնէն:

Օրինակ, մարդիկ ինչպէ՞ս կը պատկերացնեն՝ պարզել Վանի վիլայէթի կամ Էրզրումի վիլայէթի հարիւրաւոր գիւղերու բնակիչներու անունները, երբ գիւղեր կան, որոնք ի սպառ վերացած են, եւ որեւէ մէկը ողջ չէ մնացած, որպէսզի կարենայ վիճակագրութիւն կազմել», 168.am կայքին հետ զրոյցի ընթացքին ըսաւ **Աշոտ Մելքոնեանը**՝ խօսելով իշխանութիւններու այն յայտարարութիւններուն մասին, թէ պէտք է անուն առ անուն ամբողջացնեն Հայոց ցեղասպանութեան բոլոր զոհերուն անունները:

Աշոտ Մելքոնեանի համաձայն, նոյնիսկ դժուարացած են պարզել 24-25 ապրիլ 1915-ին ձերբակալուած մտաւորականներուն թուաքանակը:

«Յիշողութիւններով, մէկուն, միւսին պատմածներուն համաձայն՝ շրջանառութեան մէջ դրած էինք 600 մտաւորականի տուեալներ, ինչ որ դարձած էր դասակարգային ճշմարտութիւն: Բայց թրքական պատմագիտական ընկերութեան նախագահ Եուսուֆ Հալաչօղլուն թիւ հրապարակեց՝ յղում տալով Թուրքիոյ ներքին գործոց նախարարութեան, որ այդ գիշեր ձերբակալուած է ոչ թէ 600, այլ՝ 2345 հայ մտաւորական եւ ազգային գործիչ: Ինչո՞ւ, ցոյց տալու համար, որ այդքան մարդ կը նախապատրաստէին հայերու ապստամբութիւն Օսմանեան կայսրութեան դէմ, ասոր համար անոնք ճարահատեալ իբրեւ թէ դիմեցին ձերբակալութեան: Ուրեմն՝ եթէ կարելի չէ եղած ճշդել



մտաւորականներու թիւը յիշողութիւններով, թիւը կրնան ճշդել թրքական արխիւներու հիման վրա, ինչ որ, բնականաբար, մեզի մատչելի չէ: Մարդիկ ինչպէ՞ս կը մտածեն 1,5 միլիոն մարդու անուն գտնել ու տեղաւորել ցուցակին մէջ՝ յականէ-անուանէ: Կը կարծեմ՝ սա անկարելի բան է, գուցէ թելադրուած է նաեւ դուրսէն», շեշտեց Աշոտ Մելքոնեան:

Պատմաբանը չքացառեց, որ այս ճամբով կը փորձեն միս ու արիւն տալ պատմաբաններու այն յանձնախումբին, որ բազմիցս առաջարկուած է Թուրքիոյ կողմէ, ըստ որուն՝ պէտք է Հայոց ցեղասպանութեան հարցով զբաղի պատմաբաններու խումբը, ինչ որ Հայաստանը մշտապէս մերժած է:

Ինչ կը վերաբերի իշխանական պատգամաւոր Անդրանիկ Քոչարեանի այն յայտարարութեան, որ եթէ հրեաները կրցած են Ողջակիզումի զոհերու անունները ամբողջացնել, ապա ինչո՞ւ Հայաստանը չի կրնար, Աշոտ Մելքոնեան ըսաւ՝ թող մարդիկ լաւ իմանան, որ հրեաները այդ գործընթացին սկսած են, սակայն այդպէս ալ չեն կրցած ընդհանուր յայտարարի գալ, քանի որ մարդիկ կան, որոնք անհետ կորսուած են, անոնց մասին տեղեկութիւններ չեն եղած:

Պատասխանելով այն հարցումին, թէ հաւանակա՞ն է, որ Հայաստանի Հանրապետութեան իշխանութիւնը այս քայլով կը ցանկայ Հայոց պատմութեան էջերէն ի սպառ ջնջել Հայոց ցեղասպանութեան վերաբերեալ էջը, Աշոտ Մելքոնեան պատասխանեց.

«Եթէ մենք ազգ ենք եւ մեր ազգային ողբերգութիւնը պէտք է մոռացութեան տանք, ուրեմն՝ սա կը նշանակէ նոր ողբերգութիւն, որ, կը կարծեմ՝ հայ ժողովուրդը թոյլ պիտի չտայ: Մա ամէնէն զգայուն խնդիրն է, թող մարդիկ չհամարձակին մեր ազգային ողբերգութեան վրայ եւս ձեռք բարձրացնել, սա անկարելի բան է: Կայ սփիւռք, կայ հայ բնակչութիւն, որ յստակ գիտէ, թէ ի՛նչ տեղի ունեցած է 1915 թուականին, առհասարակ Առաջին աշխարհամարտի տարիներուն եւ սկսած տակաւին 1890-ական թուականներէն, երբ 30 տարի ցեղասպան քաղաքականութեան պատճառով հայ ժողովուրդը զրկուած է իր պատմական հայրենիքէն: Այսինքն՝ ան ոչ միայն ֆիզիքապէս բնաջնջուած է, այլեւ զրկուած է սեփական հայրենիքէն, այս իմաստով մեր ողբերգութիւնը շատ աւելի խոր ու զգայուն է», եզրափակեց Աշոտ Մելքոնեան:

ԿԻՊՐԱՀԱՅ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԸ ՊԱՏՈՒԵՑ ՎԱՍՏԱԿԱՒՈՐ ԿՐԹԱԿԱՆ ՄՇԱԿՆ ՈՒ ՏԱՂԱՆԴԱՒՈՐ ԱՐՈՒԵՍՏԱԳԷՏ ՎԱՐԴԱՆ ԹԱՇՃԵԱՆԸ



Ուրբաթ 31 Մայիս 2024-ին, երեկոյեան ժամը 8:00ին, Նիկոսիոյ Առաջնորդարանի «Վահրամ Իւթիւճեան» սրահին մէջ, տեղի ունեցաւ արժանատու հայորդի, տաղանդաւոր արուեստագէտ եւ մանկավարժ ՎԱՐԴԱՆ ԹԱՇՃԵԱՆԻ պարգևատրումը Համազգայինի Արժանեաց շքանշանով, ձեռամբ անոր Կեդրոնական Վարչութեան Ներկայացուցիչին: Ներկայ էին Տէր Մովսիկ Քահանայ Հապէշեան, Կիպրոսի Թեմի պատգամաւորական եւ Վարչական ժողովի անդամներ, Համազգայինի Օշական մասնաճիւղի անդամներ, հոծ թիւով ազգայիններ ու ներկաներ: Բացման խօսքով հանդէս եկաւ Համազգայինի Օշական մասնաճիւղի ատենապետ Պրն. Արթօ Դաւիթեան, որ նշեց թէ Համազգայինը իր հիմնադրութեան 95-րդ յոբելեանին

առիթով, կը պարգևատրէր՝ այլ արժանաւորներու կողքին, Վարդան Թաշճեանը Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչի՝ Պրն Սեպուհ Այնթապլեանի ձեռամբ: Ապա բեմ հրաւիրեց Պրն, Եղիա Գայայեանը, որ հանգամանօրէն ներկայացնէ Վարդան Թաշճեանի կեանքն ու վաստակը:

Պրն Եղիա Գայայեան իր խօսքը սկսաւ ըսելով. «Այսօր հաւաքուած ենք մեծարելու կրթական մշակ եւ գեղանկարիչ, թատերական եւ հասարակական գործիչ, հրապարակագիր եւ հրապարակախօս, բարերար եւ երաժշտասէր, յուշագրութիւններու եւ գիրքերու հեղինակ, միշտ անկեղծ ու բարի ժպիտով, բոլորիս սիրելի Վարդան Թաշճեանը:

Կրթական մշակը, արուեստագէտը, թատերական գործիչը, գրող-հրապարակագիրը, իբրեւ բնութեան ճնունդ, իր բնածին յատկութիւններով եւ բնատուր տաղանդով, բայց մանաւանդ իր անսպառ աշխատասիրութեամբ եւ անսակարկ նուիրումով կը ստեղծէ ու հանրութեան կը ժառանգէ իր պարտէզին մէջ ծլարձակած ծառերուն հոգեւոր ժառանգութիւնը, անզգալաբար կը կերտէ իր ինքնանկարը՝ անխոնջ աշխատող մշակի պէս»:

Ան մանրամասնօրէն ներկայացուց Վարդան Թաշճեանի կեանքի հանգրուաններն ու անոր տարած վիթխարի աշխատանքները: Արդարեւ, ան նախակրթութիւնը ստացած է Նոր Մարաշի Քառասուն Մանկանց Վարժարանին մէջ: Մասնաւորաբար մօրը քաջալերանքով, 12 տարեկանին կու գայ Կիպրոս եւ երկրորդական ուսում կը ստանայ Մելգոնեան Կրթական Հաստատութեան մէջ: Շրջանաւարտ կ'ըլլայ 1959-ին, գիտական ճիւղէն, Բիւզանդ Եղիայեանի տնօրէնութեան շրջանին:



Այդ տարիներուն, շարունակեց ան, Մելգոնեան Կրթական Հաստատութիւնը, ազգային, կրթական եւ դաստիարակչական իմաստով, կը գտնուէր իր փառաւոր բարձրութեան վրայ, Յարութիւն Այվազեանի, Նշան Յովհաննէսեանի, Պերճ Սանտրունիի, Պօղոս Գեորգեանի, Յարութիւն Էսէկիլեանի, Ներսէս Թամամեանի, Վահան Պետլեանի, Զելա Դաւիթեանի, Ազալի Նասիպեանի եւ այլ ուսուցիչներու շնորհիւ, որոնց հոգածութեան եւ շուքին տակ հասակ կ'առնէ ան:

Գործօն մասնակցութիւն կ'ունենայ ան Հաստատութեան թատերական բեմահարթակին վրայ, զանազան դերեր ստանձնելով: Մաս կը կազմէ Վահան Պետլեանի ղեկավարած քառաձայն երգչախումբին, իբրեւ թենոր, ինչպէս նաեւ

նուագախումբին, երաժշտական քանի մը գործիքներ՝ եղջերափող (horn), շեփոր (trumpet), աւագափող (trombone) եւ ձեռնադաշնակ (harmonica) նուագելով:

Մելգոնեանի կանաչախիտ անտառին մէջ, թուղթին կը յանձնէ իր առաջին սիրային քերթուածները: Կը թղթակցի Հաստատութեան «Այգ» պարբերաբերթին, ուր, 1959-ին լոյս կը տեսնէ «Երջանկութեան ետեւէն» պատմուածքը եւ կը շահի այդ ուսումնական տարեշրջանի «Անի Կեօքճեան» գրական մրցանակը, 18 տարեկանին:

1959-ին աւարտելէ ետք Մելգոնեան Կրթական Հաստատութիւնը, կը վերադառնայ Պէյրութ, բարձրագոյն ուսում ստանալու նպատակով: 1964-ին կ'աւարտէ Պէյրութի Ամերիկեան Համալսարանը, վկայուելով ուսողութեան ճիւղէն:

Երկու տարի ուսուցչական պաշտօն կը վարէ Լիբանանի Պաաքլին գիւղի Shouf National College-ին մէջ, իբրեւ ուսողութեան ուսուցիչ: Ապա, 1966-ին դարձեալ կու գայ կամ կը վերադառնայ Կիպրոս եւ մինչեւ 1975 թուականը կը պաշտօնավարէ իր սիրելի Մելգոնեան Կրթական Հաստատութեան մէջ, իբրեւ ուսողութեան ուսուցիչ:

1975-էն մինչեւ 2001 թուականը, 27 տարի շարունակ, անսպառ եռանդով եւ նուիրումով կը վարէ Նարեկ Հայկական Վարժարաններու տնօրէնի պաշտօնը, կը ստանձնէ երեք դասարաններու հայերէնի դասապահերը, իսկ 2001-ին, հանգստեան կոչուելէ ետք, տասը տարի շարունակ, 2009-էն մինչեւ 2019, ձեռնհասօրէն կը վարէ Նարեկ Հայկական Վարժարաններու հոգաբարձութեան ստենապետութիւնը, ինչպէլով ո՛չ ճիգ, ո՛չ ժամանակ եւ ո՛չ ալ շունչ:



Որպէս գեղանկարիչ, Պրն Գայայեան նշեց որ «Մելգոնեանի միջավայրէն ներշնչուած, որբերու տնկած շոճիներու շուրին տակ, ջրաներկի եւ իւղաներկի երփներանգ գոյներու շաղախէն, աստիճանաբար կը սկսին ոզի եւ մարմին ստանալ ուսանողութեան շրջանի գծագրութիւնները, ջրաներկ պաստառները եւ իւղաներկ կտաւները, որոնք, շուրջ երկու տասնամեակ ետք, պիտի բացայայտէին գեղանկարիչ Վարդան Թաշճեանը»:

Այսպէս, 1978-ին, «Հիլթըն» պանդոկի շքեղ սրահին մէջ կու տայ իր առաջին անհատական ցուցահանդէսը, Կրթութեան նախարար Սոֆիանոսի հովանաւորութեան տակ:

Իբրեւ հանրաճանօթ գեղանկարիչ սարքած է աւելի քան 40 անհատական ցուցահանդէսներ՝ Կիպրոս, Պէյրութ, Լոս Անճելըս, Լոնտոն, Աթէնք, Տուպայ, Թորոնթօ, Մոնթրէալ, Սիտնի, Պանքոկ եւ այլուր: Մասնակցած է նաեւ շուրջ 45 խմբային ցուցահանդէսներու, միջազգային մակարդակով:

Իր անհատական ցուցահանդէսները հովանաւորած են Հանրապետութեան նախագահներ Ղլաֆկոս Քլերիտիսը, Տիմոթիոս Խրիստոֆիասը, Արտաքին Գործոց նախարար Ճորճ Եաքովուն, Գարեգին Բ. եւ Արամ Ա. Վեհափառները, ինչպէս նաեւ ուրիշներ:

«Վրձինը կը թաթխեմ սրտիս մէջ, ներկին թաթխելէ առաջ», անկեղծօրէն կը խոստովանի արուեստագէտը, իր յուշերուն մէջ, վկայակոչելով տեսածը սիրտէն պաստառին կամ կտաւին վրայ յաւերժացնելու իր ստեղծագործական ազնիւ ճամբան:

Ցուցահանդէսներէն գոյացած հասոյթին մէկ մասը միշտ նուիրաբերած է զանազան բարեսիրական կազմակերպութիւններու, հիւանդանոցներու եւ արցախահայութեան:

Ինչ կը վերաբերի Վարդան Թաշճեանի թատերական գործունէութեան, յարգելի բանախօսը արձանագրեց. «Թատրոնի նկատմամբ սերը եւ փորձառութիւնը կը ձեւաւորուին Մելգոնեանի մէջ ուսանած տարիներուն»:

1965-ին, Պաաքլինի մէջ, առաջին անգամ արաբերէնով, կը բեմադրէ Յակոբ Պարոնեանի «Մեծապատիւ մուրացկանները», ստանձնելով Արիստոտէլ Աղայի դերը եւ կ'արժանանայ արաբ հանդիսատեսի բարձր գնահատանքին:

1966-ին, Մելգոնեան Կրթական Հաստատութեան մէջ կը հիմնէ «Յակոբ Պարոնեան» թատերախումբը եւ, իբրեւ բեմադրիչ ու դերասան, յաջորդաբար կը բեմադրէ տասնեակէ մը աւելի՝ Երուանդ Օտեանի «Չարշըլը Արթին Աղա», Սմբատ Բիրատի «Աւարայրի արծիւր», Յակոբ Պարոնեանի «Մեծապատիւ մուրացկանները», «Պաղտասար աղբար»ը, Ռոժէ Ֆէրտինանի «Տուն փեսայ», Միքայէլ Կիրճեանի «Քսան տարի անց» եւ այլ թատերախաղեր:

Խօսելով Վարդան Թաշճեանի հրապարակագրութեան մասին, բանախօսը նշեց որ Թաշճեան 2002-ին կը հրատարակէ Նարեկ Հայկական Վարժարաններու իր սիրասուն շրջանաւարտներուն ուղղուած սրտի խօսքերը, «Հուսկ Բանք» խորագրով:

2008-ին լոյս կը տեսնէ Մելգոնեանի եւ ապա Պաաքլինի մէջ գրած փունջ մը ընտրեալ քերթուածներու գրքոյկը՝ «Միրերգ»ը:



2013-ին կը հրատարակէ «Նշենիներ յուշերու շարքէն» հատորը, որ կը պարունակէ յուշերու շարք մը Մելգոնեանէն եւ Նարեկ Հայկական Վարժարանէն, մամուլի մէջ հրապարակուած յօդուածներ:

Լիբանանահայ գրող եւ հասարակական գործիչ Տոքթ. Յարութին Գեղարդի հետ շուրջ քառասուն տարի փոխանակած նամակներու հատորը՝ «Նամականի Յարութին Գեղարդի Հետ», լոյս կը տեսնէ 2023-ին, որ անկեղծ նամակագրութիւն ըլլալու սահմանը կը հաստէ, գրական ստեղծագործութեան վերածելով հեղինակներուն երկխօսութիւնը:

2022-ի վերջաւորութեան կը տպագրուի իր արուեստին եւ կեանքին նուիրուած պատկառելի եւ շքեղ հատորը՝ "Vartan", անգլերէն լեզուով, աւելի քան 200 պաստառներով:

Տակաւին, 45 տարի շարունակ, իբրեւ թենոր, մաս կը կազմէ Մելգոնեան Կրթական Հաստատութեան քառաձայն, Պէլրութի «Կոմիտաս», Ամերիկեան Համալսարանի եւ Նիկոսիոյ Ս. Աստուածածին եկեղեցւոյ երգչախումբերուն, Վահան Պէտէլեանի, Սեպուհ Աբգարեանի, Գեորգ Գանտահարեանի, Սալվատոր Արնիթայի եւ Հայրապետ Թորոսեանի ղեկավարութեամբ:

Տարիներ շարունակ եղած է ընկերային եւ պաշտօնական հաւաքոյթներու ականջահաճոյ սեղանապետը, իր քաղցրահնչիւն կենացներով, զուարճալի պատմութիւններով եւ կատակներով:

Գաղութային կեանքէն ներս վարած է ատենապետութիւնը զանազան կազմակերպութիւններու եւ բազմաթիւ առիթներով բանախօսած է ազգային, կրթական, ընկերային, գեղարուեստական եւ այլ նիւթերու շուրջ, Կիպրոսի մէջ եւ այլուր:

Վերթեան անդամ է Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան: Վկայագիրը կը կրէ Միութեան ցկեանս նախագահ Տիար Ալէք Մանուկեանի ստորագրութիւնը:

Կիպրոսի Երիկամունքի բաժանմունքի Ընկերակցութեան կողմէ, երեք այլ անձնաւորութիւններու կարգին, 2001-ին կը հռչակուի Տարուան Մարդ, իր ցուցաբերած յարատեւ եւ շարունակական աջակցութեան համար:

Նոյն տարին, Արամ Ա. Կաթողիկոսի ձեռամբ կը պարգեւատրուի Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան «Ս. Մեսրոպ Մաշտոց» շքանշանով: 2015-ին կը պարգեւատրուի Հայաստանի Սփիւռքի Նախարարութեան «Ոսկէ Մետալ» բարձրագոյն շքանշանով:

2013-ին, 2014-ին եւ 2018-ին, յաջորդաբար, Լոս Անճէլըսի, Պէլրութի եւ Երեւանի մէջ, մեծարանքի յատուկ հանդիսութիւններով կը նշուին կրթական-մշակութային կեանքի յոբելեանները:

Այս բովանդակալից եւ տպաւորիչ խօսքէն ետք, հանդիսաւոր կերպով կատարուեցաւ տուչութիւնը Համազգայինի Արժանեաց Շքանշանի եւ համապատասխան Վկայագրի, ձեռամբ Համազգայինի Կեդրոնական Վարչութեան Ներկայացուցիչ Պրն. Սեպուհ Այնթապլեանի, որ յատկապէս Կիպրոս ժամանած էր այս առիթով:



Այնուհետեւ, խօսք առաւ մեծարեալը՝ Վարդան Թաշճեան, իր շնորհակալութեան եւ սրտի խօսքը ըսելու ներկաներուն: Իր սրտայոյզ խօսքին մէջ, մեծարեալը ընդգծեց որ կրթութեան եւ արուեստի լայն գետին մէջ հոսող առուակի մը, վտակի մը իր պարտականութիւնը ի կատար ածած էր որպէս Աստուածային տուրք եւ բարոյական պարտք: Ան այժմու իր պարգեւատրումը կը նկատէր մասնաւորաբար իբրեւ ուխտ ու հրաւեր, խոստում ընդառաջելու հայութեան գալիք առաջադրանքներու...«Կամքը յոգնութիւն ու տարիք չի ճանչնար», ըսաւ ան: Ան կարեւորութեամբ շեշտեց այն իրողութիւնը, թէ յաջողութիւնը չէր բանալին երջանկութեան, այլ երջանկութիւնն էր բանալին յաջողութեան: Եւ ինք երջանիկ եղած էր իր ընտանիքով, «կռանիթեայ կամքով» եւ «անշեղ անհատականութեամբ» օժտուած իր հաւատարիմ ու նուիրեալ կողակիցով՝ Միլվայով, իր դուստրերով, փեսաներով, թոռներով, եւ իր ընտանիքի միւս բոլոր անդամներով: Նմանապէս՝ իր շրջապատի կառոյցներով, պաշտօնակիցներով, աշակերտներով, բարեկամներով... Ան իր հոգեգրաւ խօսքը աւարտեց, ըսելով որ՝ երազ ունի, երազը՝ տեսնելու ոչ միայն կրթուած, ուսեալ, դաստիարակուած հայ սերունդներու շարանը, այլեւ խաղաղ, բարգաւաճ ու բարօր Հայաստան, Արցախ, Մփիւռք եւ մեր պահանջատիրութեան իրաւունքներուն տիրացած հայ ժողովուրդ: Շատ հետաքրքրական էր բարձր հմտութեամբ պատրաստուած վաւերագրական ժապաւենը, ուր ներկաները դիտեցին Վարդան Թաշճեանի կեանքէն, գործունէութենէն, հարուստ վաստակէն պատկերներ ու լուսանկարներ՝ խորապէս առիւնքնող եւ ոգեշնչող: Հանդիսութիւնը վերջ գտաւ Տէր Մովսիկ Հապէշեանի «Պահպանիչ» աղօթքով:

ԱԶԱՏ ԽՕՍՔը ջերմօրէն կը շնորհաւորէ մեծարեալ ՎԱՐԴԱՆ ԹԱՇՃԵԱՆԸ, իրեն մաղթելով քաջառողջութիւն, անխոնջ կորով եւ դէռ երկար տարիներու բեղուն ու ազգանուէր գործունէութիւն:

Երան Գույումճեան

ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

ԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԸ, ՅԵՏ ՄԱՀՈՒ ԹԷ՞

ԱՌ ԿԵՆԴԱՆՈՒԹԵԱՆ ԿՐ ԳՆԱՀԱՏՈՒԻՆ

Պարոյր Յ. Աղպաշեան



Ես պիտի չխօսիմ մեր անցեալին մասին, ոչ ալ պիտի վկայակոչեմ այդ ժամանակները, սակայն, գոնէ իմ եւ իմ հասակակիցներուս կեանքը աչքի առաջ ունենալով, հոն պիտի սեւեռեմ իմ խոհերուս շարանը ու հայեացքս: Հարցը կը վերաբերի մեր երէկուան եւ այսօրուան (եւ արդեօք ապագայի) մտաւորականներուն, որոնք ամբողջ կեանք մը նուիրեցին ու ծառայեցին իրենց առաքելութեան արդիւնաւորման ու դրսեւորման, զայն նկատելով իրենց



«Ճիտին պարտք»ը, ազգային, հայրենական, կրթական, գաղափարական, մշակութային, հասարակական առումներով ու չափանիշներով:

Տարագրութենէն ետք, ո՞վ կրնար իր ցանուցրուած ու տարտղնուած «բեկոր»ները ի մի բերել, անոնց կեանք եւ ապրում տալ, թարմացնելով իրենց գոյատեւելու վճռակամութիւնը, բացի այն հատուածներէն, որոնք կառչած էին իրենց արմատներուն ու բնաւ այլընտրանք չէին տեսներ, բացի դառնալու «տէր»ը իրենց ժառանգուած հարուստ եւ անշեղ ուղեգիծին:

Կա՞ր ասկէ աւելի վեհացնող ու պանծացնող պարտականութիւն, երբ անխուսափելին էր անիկա, ի ծառայութիւն ու վերյառնում հայ ժողովուրդին բարօրութեան ու բարեկեցութեան, վերականգնումին ու վերագարթօնքին:

Կստահաբար, այս էր պատճառը, որ ա՛յդ սերունդի ներկայացուցիչները, անայլայլ եւ անժխտելի համոզումներով ու դիտարկումներով, լծուեցան հայ Սփիւռքը կազմակերպելուն ու կառուցելուն, պահելու ու պահպանելու, տուեալ ժամանակներուն, չունենալով գոյերթի այլ պայմաններ:

Այդ սխրագործութեան տեսլապաշտները, ամենայն պատասխանատուութեամբ եւ յանձնառութեամբ, գործնապաշտութեամբ եւ ամրակուռութեամբ, նուիրուածութեամբ ու զիտակցութեամբ, դարձան Հայ Սփիւռքի զօրավիզ կանգնող ու սատարող զինուորագրեալները, տարագրուած հայութիւնը պաշտպանելու, ապահովելու անոր գոյութեան հիմնասիւնները, զայն համալրելով այն բոլոր կարելիութիւններով, որոնք անոր կուտային կենդանութեան ու տոկունութեան լիցք ու շունչ, մինչեւ որ, օր մը, պատմական հայրենիքը զիրենք կ'ընդունի իր ծոցին մէջ:

Տնորք թէ ոչ, ասիկա էր այդ «խենդ»երուն ամբողջ երազանքը եւ էութիւնը, առանց որեւէ վարանումի ու տատանումի, որուն համար պատրաստ էին լիովին պայքարելու ու դիմագրաւելու այն դժուարութիւնները, որոնք իրենց առջեւ կը ցուցէին:

Ասիկա՞ էր այն կամքը ու վճիռը, որ իրենց սերունդին համար դարձած էր պայքարի թիրախ ու հորիզոն, հասնելու համար անհասնալիութեան ու անհասանելիին:

Ինչո՞ւ այս գրառումներն ու խոհերը:

Միթէ պարզ չէ՞, որ եթէ Սփիւռքը, ակամայ, կրցաւ հայութեան ինքնութիւնը, գոյատեւումը ու համատարած կենդանութիւնը պահել, իր բազմաբեղուն, բազմագոյն ու բազմաձեւ երակներով, ատոնք փաստ չէի՞ն, որ ան Փիւնիկեան ծնունդ մը ունեցաւ, ուր քանի մը սերունդներ կազմուեցան, խմորուեցան ու հասունցան, ժառանգաւորուեցան եւ յաջողագրուեցան, Սփիւռքը պահելու այնքան տաք ու ջերմ, որ երաշխաւորուած ըլլայ անոր կանգուն, անսասան եւ աներեր մնալու ապահովութիւնը, Հայ Դատին անժամանցելիութիւնը եւ անոր հետապնդելիութիւնը առանց շրջանցելու:

Յաջողեցան երեց սերունդի այդ ներկայացուցիչները, որոնք տառապանքի, գոյակոխի, պայքարի, յարատեւման ու վերածնունդի «նշխար» էին, անտարակոյս, այո՛, որովհետեւ, այն ինչ որ կը տեսնենք, կը զգանք ու կ'ապրինք ամենուր, ատոնց լուսաւոր պատկերներն են, հոգ չէ թէ, կարգ մը պարագաներու ու շրջաններու մէջ, անոնք մերթ մթագնեցան, մերթ լուսանցքուեցան, բայց, վերջին հաշուով, անոնք մնացին «լուսաւորող կանթեղ»ներ, իրենց լոյսով ու ճառագայթով, որովհետեւ անոնց ընդմեջէն կը փայլատակեր յոյսի ու վստահութեան ցոլքը, որքան ալ անոնք ըլլան երբեմն տժգոյն, բայց, միշտ յուսատու:

Այսօր, այդ երախտաշատ եւ շնորհապարտ սերունդներու ներկայացուցիչները չկան, մեկնած են այս աշխարհէն, բայց անոնք ԿԵՆԴԱՆԻ են իրենց գործերով, կտակով ու ժառանգով, որ հայութեան «մնացորդաց»ին «հուրն ու բոյրը» կը յուշեն, շարունակելու երթը, հաւատարիմ մնալու ուխտին ու երբեք չնոռնալու «ցեղին եւ արեան կանչ»ը:



Պատահական չէ որ, բնա՛ւ այդ երաշխատւորները, ո՛չ միայն չեն մոռցուիր, այլեւ՝ առիթէ առիթ կը յիշուին, իրենց զգայացունց ներդրումներով, դերակատարութիւններով եւ առաջնորդութիւններով:

Այդուհանդերձ, եթէ անաչառութեամբ պիտի խօսուի, այնքան ալ արդար պիտի չըլլար, ըսել կամ յայտարարել, որ այդ անուանի սերնդակիցներէն շատերը վայելած են ու (կը վայելեն) համապատասխան արձագանգ, անշուշտ, պատճառները հոս թուելու պէտք չկայ, ոչ ալ անդարդառնալու անոնց, որովհետեւ ատոնք բոլորովին այդ թղթածրարի մը քննութեան կը կարօտին:

Հիմնահարցը այն է, որ գնահատումը կամ արժեւորումը, ինչպէ՞ս կը բնորոշուի, ո՞ր կը ձեւաւորուի, ապա, ի՞նչ հիմունքներով կը գնահատուի (կամ... կ'անտեսուի), այնքան ատեն որ՝ քմահաճութեան, կողմնակալութեան, անտեսութեան եւ կարճատեսութեան սլաքները միշտ առկայ են:

Մինչեւ 70ական թուականներու սկիզբը, ամէն ինչ «նորմալ» ըլլալու ու դառնալու ընթացքին մէջ էր, հայապահպանումի կոուաններու ամրագրումով, բայց, մանաւանդ զանոնք կենսատու, կենսախինդ ու կենսալի պահող ջերմապահ գործօններով, որոնց մէջ, շնորհակալ, երախտաշատ ու նուիրեալ դերակատարութիւն ու ներգործութիւն ունէին, յատկապէս մտաւորականները, իրենց գաղափարական, կրթական, կազմակերպչական, գրական, ստեղծագործական, ազգային, մշակութային, առաջնորդական ու ղեկավարական մասնակցութիւններով:

Ամէն ինչ, համարեա հեզասահ ու ձեռնհաս ընթացքի մէջ էր, նախանձելի ըլլալու աստիճան, իսկ Լիբանանը անոնց մէջ կը փայլէր իր լուսաւորութեամբ, հրաշագեղութեամբ, կազմակերպչականութեամբ ու համաչափութեամբ, ոչ միայն իր ներհայկական չափանիշներով դառնալով իւրայատուկ աղբիւր մը՝ հայկականութեան, հայապահպանութեան, հայրենասիրութեան եւ ազգակառչածութեան, այլեւ՝ «բաժին» հանելով նաեւ այլ եղբայրական համայնքներուն ու գաղութներուն:

Լիբանանահայութիւնը ողնաձուծն էր այն տեսլապաշտներուն եւ իրատեսներուն, որոնք գիտէին ինչպէ՞ս տնօրինել ու կարգադրել, կազմակերպել ու շնորհապահել իրենց «հօտ»ներն ու «օճախ»ները եւ իրօք, լաւագոյնս կրցան դրսեւորել իրենց արժանիքներն ու նպաստները, յօգուտ իրենց ազգային կարիքներուն ու պահանջներուն, հրամայականներուն եւ առաջադրանքներուն:

Այժմ, այդ մեծամեծները՝ կուսակցական, ղեկավարական, մտաւորական, գործիչ, կրթական մշակ եւ այլ երախտաւորներ, իրենց ետին ձգելով հսկայական պաշար, հարուստ փորձագիտութիւն, ուսանելի ռազմավարութեան, օրինակելի ազգայնականութեան, գործնապաշտ դաստիարակութեան, առողջ սերնդափոխութեան, վառ ջահակրութեան բեղմնաւոր ժառանգութիւնը, մեկնած են այս անցաւոր աշխարհէն, թերեւս այն յոյսով եւ ակնկալութեամբ, որ իրենց յաջորդները կը մնան հաւատարիմ իրենց ազգային հաւատամքներուն, որովհետեւ՝ հոն է որ կը կերտուի ու կը պահպանուի հայութեան գոյութեան ու կենդանութեան արեւելումի ուղին:

Իրաւունք ունէին այդ բազմագիտակ, բազմահունչ ու բազմամետ ազգային աւագանիները, միայն այդ սրընթացով տեսնելու եւ ապահովելու տարագրուած հայութեան պատնէշներու վրայ մնալու սրբազան առանձնայատկութիւնը:

Ճիշդ էին այդ փաղանգները, իրենց իրատեսական եւ ազգամեծարական հաւատամքներով, հետեւաբար, այդ սկզբունքներով ալ դաստիարակեցին ու կոփեցին իրերայաջորդ սերունդներ, որոնք իւրաքանչիւրը, իր կարողութեամբ ու կարելիութեամբ, հմտութեամբ ու գործնականութեամբ, ձեռնահասութեամբ եւ անմիջականութեամբ, պատրաստ էր շարունակել այն երթը, որ յետեղեռնեան սերունդին վստահուած էր, զայն փոխանցելով իր յաջորդներուն:



Այդ աւանդը, աներկբայօրէ՛ն, իր հետքերը ձգեց նաեւ յաջորդ սերունդներուն վրայ, որոնք նոյն հաւատքով ու կամքով, համոզմունքով ու կիրքով, կառչած մնացին, մէկ կողմէն՝ իրենց ազգային արմատներուն հարազատ կրողը դառնալու եւ անոր հետեւորդը դառնալու, միւս կողմէն անշեղօրէն շարունակելու նպատակաշէն երթը, իր ազգաշունչ ու հայրենանուէր ճառագայթումով:

Անշուշտ, մօտիկ երէկուան եւ այսօրուան պատկերները երբեք նոյնը չեն, քանի որ շատ բան փոխուած է, յեղաշրջուած, այլասերած ու ստուերացած, այս ակն այն պատճառներով, բայց, յստակ եւ աչքառու անխուսափելիութեամբ:

Որքան հպարտութիւն եւ արժանապատուութիւն է, որ այդ երախտաւորները ունեցան իրենց յաջորդները, նոյնիսկ ժառանգորդները, որոնք եղան երեւելիները իրենց նախորդներուն, արժանաւորապէս որդեգրելով անոնց ժառանգը:

Այսօրուան դրութեամբ, երբ ակնարկ նետենք, որ մեր հարուստ, բազմաբեղուն եւ ակնառու մտաւորականներէն ի՞նչ մնացած է, որուն նկատմամբ անհրաժեշտ է ցուցաբերել համապատասխան յարգանք ու վերաբերմունք, երբ, մեղմ ըսած, բոլորին մօտ յուսահատութիւն կը տիրէ, տխրութիւն կը պատէ:

Հարցադրումը դիպուկ ու տեղին կրնայ ըլլալ, բայց, ատիկա ի՞նչ նշանակութիւն ունի, երբ հրապարակի վրայ մնացած մտաւորականները (իրենց զանազան պատկանելիութիւններով, դերերով, մակարդակներով, արժանապատուութիւններով ու հեղինակութիւններով), չեն արժանանար համապատասխան գնահատանքի, վարկանիշի եւ պերճախօս ուշադրութեան, բարձր ու վայել պահելու համար անոնց վաստակին, նպաստին ու դերին մեծութիւնը հայ իրականութեան մէջ:

Յստակացնե՛նք.

Երեց սերունդի յաջորդական ներկայացուցիչները (որոնցմէ հազուագիտ մաս մը հրապարակի վրայ է), որոնք ոչ միայն շարունակեցին ազգային գծուած ուղիին արահետը, այլեւ՝ նոր ակօսներով եւ բեւեռներով զայն բերքաւորեցին, ամենայն հարազատութեամբ, շարունակականութեամբ եւ արդիւնաւէտութեամբ, միշտ լուսապայծառութեան հեռանկարներով:

Հարցադրումը, այս առիթով, որ ինքզինք կը պարտադրէ, հետեւեալն է.

Այսօր կա՞ն վաստակաւոր ու հեղինակաւոր տարրեր, որոնք ազգային գետնի վրայ կը գրաւեն նոյնքան արժանաւոր դերեր, ունին զգալի ներդրումներ, կը փայլին իրենց հեղինակութիւններով, արժանացած են բազմաթիւ տիտղոսներու, բայց, այդ բոլորը գնահատողներ կա՞ն արդեօք:

Ինչպէ՞ս բացատրել այս այլամերժութիւնը, երբ «կենդանի» մտաւորականները (դարձեալ իրենց զանազան պատկանելիութիւններով) կը մնան «անտէր-անտիրական», թէ իրենց վաստակին ու հանգամանքներուն արժեւորութիւնը ու վարձատրութիւնը ո՞վ պիտի կատարէ կամ ինչպէ՞ս պիտի հատուցուի կամ ուրկէ՞ պիտի մեծարուի (հարցը միայն հատուցումին հետ առնչուած չէ):

Անգամի մը համար (ոչ միայն) շրջապատը նայիլ ու տեսնել, թէ առնուազն, բազմատարիներու առաքելութիւն ու յարգելիութիւն վայելող անուանիները, այսօր, ո՞ր պատուը ունի են եւ ո՞ր մեծարուած (շատ հազուադէպ պարագաները բացառելով):

Նախորդ արժանաւորները մեկնեցան, հիմակուաններն ալ սկսած են պակսիլ, ո՞վ պիտի յիշէ, վերյիշէ զանոնք, որոնք «բան» մըն էին, «բան» մը կը ներկայացնէին, իսկ այսօր, հոս չեն, կամ վաղը երբեք հոս պիտի չըլլան:

Հետաքրքրական է չէ՞. անոնք յետ մահու թէ՞ առ կենդանութեան կը գնահատուէին...:

(Պէլրութ)

30/5/2024

ՄԵՐ ԴԻՏԱՐԿՈՒՄՈՎ ՈՒ ԴԱՏՈՒՄՈՎ շարքէն

ԵԿԵՂԵՑԻՆ ԴԵՐԸ ՊԵՏԱԿԱՆԱՇԻՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ



Վերնագիրը ինքնին անհերթ է, հակասական և ոչ արժանահաւատ: Եկեղեցին ընդհանրապէս պէտք չէ զբաղի քաղաքականութեամբ: Ո՞ր դարուն մէջ կ'ապրինք: Գիտութիւնը այսօր այնքան զարգացած է, իսկ կրօնքի նշանակութիւնը զգալիօրէն նուազած: Արդի աշխարհի պետութիւններէն միայն Իրանի Իսլամական Հանրապետութիւնն է, որ կը կառավարուի «շարիա»-ի օրէնքներով և կը տարածէ իր ազդեցութիւնը շիայի ճիհաստիսներուն վրայ: Սեուտի Արաբիան ժամանակէ մը իվեր սկսեր է որոշ ազատութիւններ շնորհել իգական սեռի ներկայացուցիչներուն և կ'աշխատի չառնչուիլ միջազգային

ահաբեկչութեան հետ: Տարբեր է Թիւրքիոյ պարագան: Ան կը յաւակնի ստանձնել տարածաշրջանի առաջնորդի դերը և հաւասարապէս կօզտագործէ իսլամական կրօնքը և փանթուրքական գաղափարները իր ծաւալապաշտական նկրտումներէն ելլելով: Ինչ կը վերաբերի պաղեստինցիներու ապրելու իրաւունքները իլաժ Իսրայէլին՝ թէպէտ մովսիսականութիւնը իրենց կրօնքն է, սակայն պետութիւնը չառաջնորդուի «Թորա»-ի օրէնքներով: Թորան եբրայեցոց դաւանանքի սուրբ գիրքն է: Ինչքան իրատեսական է ուրեմն, որ Հայաստանեայց աննշան Առաքելական Եկեղեցին փորձէ իշխանութեան պարտադրել իր խաղի կանոնները: Ունի՞ այնքան ազդեցութիւն և ոյժ, որ ներկայացնէ թէ՛ Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիները և թէ՛ աշխարհասփիւռ հայութեան տարբեր յարանուանումները: Թէ կը պատկերացնէ թէ միայն ինքը ունի ճշմարտութեան բանալին:

ՀԱԵ պատմութեան ընթացքին եղած է շատ երեքուն և յարափոփոխ: Բաւական է մտածել որ ան միշտ հետեւեր է քաղաքական էլիթին և միշտ փոխեր է իր նստավայրը՝ տեղափոխուելով քաղաքէ քաղաք: Արդարեւ, Քրիստոնէութիւնը Հայաստանի պետական կրօնքը հռչակուելէն ետք 301 թուին, Տրդատ Գ. Արշակունին և Գրիգոր Լուսաւորիչ հայրապետը յաջողեցան ամրապնդել կոուախնձոր դարձած Հայաստանի անկախութիւնը: Մէկ ազգ և մէկ կրօնք կարգախօսը կրցեր էր ժամանակաւորապէս փրկել մեր հայրենիքը հարեւաններու ոտնձգութիւններէն: Աւելի ուշ, իր փառասիրութեան համար, Պետրոս Գետադարձ կաթողիկոսը Անիի բանալիները յանձներ է Բիւզանդիոնին: Բազրատունեաց հարստութեան անկումէն ետք, երբ Կիլիկիոյ մէջ վերստին ամրացաւ հայոց պետականութիւնը, կաթողիկոսարանը Վաղարշապատէն փոխադրուեցաւ Կիլիկիոյ մայրաքաղաքը՝ Միս: Խաչակրաց արշաւանքներու ժամանակ, կաթողիկէ և հայ եկեղեցիները կը մերձենան՝ ի գին կաթողիկէ յարանուանութեան մուտքին ի Կիլիկիա: Կիլիկիոյ անկումէն ետք, կաթողիկոսարանը դարձեալ կը վերադառնայ Էջմիածին/Վաղարշապատ:

Այսօր մեր փոքրիկ ազգին համար մեծ շոյալութիւն է ունենալ երկու կաթողիկոսներ՝ յանձինս Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ի և Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոս Արամ Ա-ին: Նոյնպէս իրարմէ անկախ կը գործեն Կոստանդնուպոլսոյ և Երուսաղէմի չենթարկուող հայկական պատրիարքութիւնները՝ ինչքան ալ որ Էջմիածնայ վեհափառը ինքզինք անուանէ «ծայրագոյն պատրիարք»: Անունով չէ՛ այլ հեղինակութեամբ ու գործով: Ասոնց վրայ եթէ գումարենք նոր օծուած կուսակրօն «սրբազան» արքեպիսկոպոսներն ու գերաշնորհ եպիսկոպոսները, հոգեշնորհ վարդապետներն ու ծայրագոյն վարդապետները,



կուսակրօն արեղաներն ու աշխարհ տեսած արժանապատիւ քահանաները, բարեշնորհ սարկաւագներն ու դպիրները, ապա կունենանք ընդարձակ, բաժան-բաժան եղած անզէն խաչակրաց բանակ մը: Անդին, օլիկարխներն ու ազգային ջոջերը զբաղած են նոր եկեղեցիներ կառուցելով՝ փոխանակ եղածները վերանորոգելու...: «Լուսաւորչական» կամ «ուղղափառ» եկեղեցականներէն զատ ունինք հայ կաթողիկէ հոգեւորականներ, բողոքական վերապատուելիներ և «կասկածելի» Եհովայի վկաներ և ուրիշ աղանդաւորականներ: Քրիստոնէայ հայերէն բացի, գոյութիւն ունին Համշէնի իսլամացած հայերը և անշուշտ անթիւ-անհամար անհաւատ, անաստուած, անկրօն աթէիստները:

Ի՞նչ գործ ունի առհասարակ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցին պետականաշինութեան մէջ: Մա՛ն չ բնական է, ո՛չ ալ բանական:

Համեմատութեան համար, օրինակ պիտի բերեմ Շուէտի պետական Եկեղեցին (Svenska Statskyrkan): Ան ունի ընդամէնը մէկ առաջնորդ արքեպիսկոպոս, ով աթոռանիստ Ուփսալա քաղաքէն կը հսկէ երկրին մէջ գործող աւետարանական հաւատամբը: Նախկին արքեպիսկոպոսը, ով հերթականութեամբ երկրի 70-րդն էր, առաջին կին հոգեւորականը եղած է, ով արժանացած էր այդ պատուաբեր բարձր պաշտօնին՝ վաստկելով հաւատացեալ ընտրողներու ձայներուն մեծամասնութիւնը (53 %):

Քրիստոնէութիւնը մուտք գործած է հեթանոս վիքինկներու ժամանակ, Ք.Ե. 1050 թուին կաթողիկ վանական Olaus Petri-ի կողմէ, որ եկած էր Հռոմէն: Սակայն քրիստոնէութիւնը որպէս կրօնք անցած է զարգացման տարբեր փուլերէ: Մարտին Լութերի կրօնական թէզերը պատճառ կը հանդիսանան, որ պապական բանակները իրենց օղակները սեղմեն հիւսիսի բողոքականներուն շուրջ: Երեսուն տարիներու տեւական պատերազմը վերջ կը դնէ կաթողիկոսութեան և Հիւսիսի երկիրները կը հիմնեն իրենց ազգային եկեղեցիները և ազգային գրականութիւնը: Աւետարանը կը թարգմանուի մայրենի լեզուներուն և ծիսակատարութիւնները տեղի կունենան բոլորին համար ըմբռնելի մայրենի լեզուներով: Շուէտական Պետական Եկեղեցին այսօր զուտ կրօնական հաստատութիւն մըն է, որ կը քարոզէ Քրիստոսի ճշմարիտ վարդապետութիւնը, առանց շահարկումներու: Ան բնաւ չի միջամտեր պետական կառավարման. ոչ ալ կը խառնուի աշխարհիկ գործերու:

Չնայած արձանագրուած գիտական նուաճումներուն և դէպի անջրպետ արձակուող արբանեակներուն՝ ՀԱԵ-ն ի գուր կը յամառի վերականգնելու իր երբեմնի փառքը: Տարօրինակ չէ ուրեմն՝ ինչո՞ւ աղանդաւորները կը շատնան մեր երկրէն ներս և ինչպէ՞ս կը յաջողին հոգեւորսով զբաղելու՝ ներքաշելով բնակչութեան խոցելի մասը, այնինչ ՀԱԵ պարտաւոր էր փրկել իր հօտը ուժացումէ: Հաւատք, յոյս և սեր քարոզելով՝ խօսքէն պէտք է անցնին գործի: Եկեղեցին նախ և առաջ պէտք է դառնայ հոգեւոր հաստատութիւն, որպէսզի տարածէ Յիսուսի սիրոյ պատգամը իր հետեւորդներուն: Ան պէտք է զբաղուի բարեգործութեամբ, հասնելով աղքատներու կարիքներուն, կերակրէ անօթիներուն և գիշերելու տեղ յատկացնէ անօթեւաններուն: Մեր մակաբոյժ կղերականները հարուստ ձեռնարկատէրեր են և ընդհանրապէս աղերս չունին իրաւական պետութեան հետ:

ԱՐԱՄ ԱՃԷՄԵԱՆ

7/6/2024

(Իր դիմատետրի էջէն)

ԳՈՅՈՒԹԵՆԱԿԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ

ՀՐԱՅՐ ՊԱԼԵԱՆ



Հայաստան եւ Սփիւռք գոյութենական անդունդի եզրին կը գտնուին: Ներքին պառակտումները Հայաստանի մէջ, Սփիւռքի մէջ եւ Հայաստանի ու Սփիւռքի միջեւ, ա՛լ աւելի կը վատթարացնեն անդունդին սպառնալիքը:

Համաշխարհային հետաքրքրութիւնը հեռաւոր եւ հանքանիւթերով աղքատ Հայաստանի նկատմամբ, լաւագոյն պարագային, սահմանափակ է: Նոյնիսկ ցեղասպանութեան վտանգը կամ անոր գործադրումը լուրջ հետաքրքրութիւն չի կրնար արծարծել՝ վկայ Կազայի մէջ գործադրուող ցեղասպանութիւնը: Եթէ մենք՝ հայերս, չկարենանք դիմակայել մարտահրաւերները, ուրիշ երկիրներ պիտի չ'օգնեն:

Հիմնական սպառնալիքները դիմագրաւելու համար անհրաժեշտ է համախմբուիլ նուազագոյն ընդհանուր յայտարարի (minimum common denominator) մը շուրջ եւ մշակել նուազագոյն գործնական ծրագիր մը: Որո՞նք են ամենէն կարեւոր գոյութենական սպառնալիքները, եւ նուազագոյն ընդհանուր յայտարարը ի՞նչ տարրեր պէտք է ներառէ:

Անմիջական սահմանային խոցելիութիւններէ անդին, առաջնային գոյութենական սպառնալիքը Հայաստանի մեկուսացումն է տարածաշրջանէն եւ իր դրացիներէն: Հայաստանը ունի հակամարտող, հակառակորդ յարաբերութիւններ Ատրպէյճանի (թիւ 1 թշնամի), Թուրքիոյ (թիւ 2 թշնամի) եւ Ռուսիոյ հետ: Վրաստանի հետ Հայաստանը ունի սառն, եթէ ոչ ոչ-բարեկամական յարաբերութիւններ: Իսկ Իրանի հետ Հայաստանի յարաբերութիւնները Արեւմուտքին կողմէ կը դիտուին իբրեւ անցանկալի:

Ատրպէյճանի, Թուրքիոյ եւ Ռուսիոյ հետ Հայաստանի եւ հայութեան հակասութիւնները կարգաւորելու փոխարէն, մենք կը ձգտինք բարեկամական յարաբերութիւններ եւ դաշինքներ զարգացնել հեռաւոր Եւրոպայի եւ Միացեալ Նահանգներու հետ, հակառակ անոնց բացայայտ զգուշացումներուն, որ իրենք Հայաստանի փրկութիւնը չեն կրնար ապահովել:

Անկախ կորուստի նպաստող պատճառներէն, յատկապէս՝ Ատրպէյճանի անզիջողականութիւնը եւ պատերազմ դիմակալելու մեր կողմի անպատրաստութիւնը կամ



փոխզիջումներու համաձայնիլը, ինչպէ՛ս պէտք է արձագանգենք Ատրպէյճանի կողմէ իրականացուած Արցախի ցեղային զտումին եւ ցեղասպանութեան: Կարելի՞ է կորուստը շրջել: Կրնա՞նք հետապնդել Ալիեւը եւ գործակիցները միջազգային դատարաններու (օրինակ՝ Միջազգային քրեական դատարանէն, ICC) մէջ: Ի՞նչ հեղինակութիւն կ'ունենայ այդ գործընթացը, եթէ Հայաստանի պետութիւնը հարցէն դուրս մնայ: Վերադարձի իրաւունքի հետապնդումը ի՞նչ կրնայ իրագործել, ի՞նչ պայմաններու տակ, ո՞ր պէտք է հետապնդել հարցը: Ի՞նչ պէտք է ըլլան այսպիսի գործընթացներու նպատակները: Կա՞ն այլընտրանքային պահանջներ-լուծումներ, որոնք Ատրպէյճան կ'ընդունի կիրարկել: Ատրպէյճանի հետ առձակատումները եւ մշտական թշնամութիւնը ի՞նչ հետեւանք պիտի ունենայ: Ատրպէյճան կրնա՞յ փոխել իր կեցուածքը: Դժուար է պատասխանել այս հարցումներուն, Թերեւս անկարելի՛: Բայց պէտք է քննել այս հարցերը:

Նոյնպէս, թերեւս աւելի դժուար է քննարկել 1915ի Յեղասպանութեան մասին մեր 109 տարիներու սովորութիւնները, հասկացողութիւնները եւ եզրակացութիւնները : Բայց, արդեօք Յեղասպանութի՞ւնը պէտք է տիրապետէ, բնորոշէ կամ յատկանշէ հայկական աշխարհի մտածելակերպը եւ ապագայի տեսլականը: Արդեօք այսպիսի հարցադրում կը խեղաթիւրէ՞ Յեղասպանութեան պատմական ժառանգութիւնը: Արդեօք այս հարցի հետապնդման տարբերակներու քննութիւնը պէ՞տք է շարունակէ մնալ սրբապղծութիւն, զոր կարելի չէ քննարկել: Արդեօք Թուրքիոյ հետ երկխօսութեան այլընտրանքային ուղիներ կա՞ն, առանց զիջելու Յեղասպանութեան ապացուցուած իրականութիւնը եւ անկէ բխող որոշ պահանջները:

Ի՞նչ պահանջ ունինք այս հիմնահարցին շուրջ: Յեղասպանութեան պաշտօնական ճանաչումը թուրք պետութեան կողմէ տրամաբանական է, նոյնպէս կոթողներու վերականգնումը, նաեւ տնտեսական որոշ հաստուցումներ: Կա՞ն նաեւ խորհրդանշական պահանջներ: Իսկ ինչպէ՛ս վերաբերիլ հողային հաստուցման, Սեւրի դաշնագիրի վերականգնման, Կարսի դաշնագիրի չեղարկման կամ այլ հարցերու:

Այսպիսի դժուար նիւթեր պէտք չէ թապու (արգիլեալ) մնան, երբ լռութիւնը կամ լռզունգներու կոյր կրկնութիւնները կրնան միայն բախիլ թրքական ժխտողական պատին:

Անշուշտ կրնանք շարունակել մեր պահանջատիրութիւնը: Բայց պէտք է իրագել ըլլանք, որ միջազգային իրաւունքի հետապնդումը ունի realpolitik (գործնական քաղաքականութեան) սահմաններ: Վկայ Կազայի մէջ գործադրուող ցեղասպանութիւնը: Նոյնիսկ միջազգային դատարաններու վճիռները պարտադիր չեն, յաճախ կոպտօրէն կ'անտեսուին: Կայ նաեւ Արդարադատութեան միջազգային դատարանի (ICJ) որոշումը, որ վաւերացուց Քոսովոյի



անջատումը Սերայիայէն, եւ որ ձեռով մը կը խեղաթիւրուի եւ չի կիրարկուիր Արցախի պարագային: Միջազգային քրէական դատարանի (ICC) կալանաւորման հրամանները (մեղադրական եզրակացութիւնները) կամ Արցախի շրջափակումը դադարեցնելու ICJ-ի հրամանները կ'անտեսուին անպատիժ: Ջարմանալի չէ, որ իրաւունքներն ու աշխարհաքաղաքականութիւնը շատ յաճախ կը բախին իրարու: Ի հարկէ, պարտաւոր ենք մնալ միջազգային օրէնքներու ճիշդ կողմը: Բայց որովհետեւ միջազգային կանոնները եւ իրաւունքները մեր կողմն են, այդ իրաւունքներու հետապնդումը միշտ եւ անպայման խելամիտ չէ:

Արցախեան եւ Յեղասպանութեան հիմնական հարցերէն անդին, ու՞ր է Հայաստանի տեղը այսօրուան տարածաշրջանի եւ աշխարհի մէջ: Արդեօք Հայաստան պէ՞տք է կողմնորոշուի առկայ աշխարհառագմավարական մրցակցութիւններուն մէջ՝ Արեւելք ընդդէմ Արեւմուտքի, ժողովրդավարութիւն ընդդէմ բռնապետութիւն եւ այլն, թէ՞ պէտք է մնայ կառուցողականօրէն հաւասար հետաւորութեան վրայ թէ՛ Արեւմուտքէն եւ թէ՛ Արեւելքէն: Ինչպէ՞ս կրնայ Հայաստանը ունենալ բաւականաչափ զսպող կամ կանխարգելիչ ուժ, ներառեալ՝ ռազմավարական դաշինքներու միջոցով, միաժամանակ զարգացնելով բարեկամական յարաբերութիւններ իր դրացիներուն հետ: Ինչպէ՞ս կարելի է զանազանացնել Հայաստանի տնտեսութիւնը, առանց մեծ ցնցումներու եւ առանց Ռուսիոյ աչքին փուշ դառնալու:

Առաւել, ու՞ր է այսօր Սփիւռքի տեղը հայ աշխարհին մէջ: Սփիւռքի հին մտաւորական կեդրոններու կործանումով, ուր հայկական մշակոյթը գոյատեւած է Հայաստանէն դուրս, եւ որոնք արտադրած են մարդուժ Սփիւռքի միւս գաղթօճախները սնուցելու համար, Սփիւռքը այսօր ընդհանրապէս կը մաշի՝ աստիճանաբար տկարանալով: 1991էն ի վեր, Սփիւռքի ուղղուածութիւնը դէպի Հայաստան, որքան ալ այդ թերի կամ անբաւարար եղած ըլլայ, տկարացուցած է զինք: Ի՞նչ կարելի է ընել այս կացութիւնը փոխելու համար:

Նկատի ունենալով վերը նշուած մարտահրաւերները, պէտք չէ զարմանանք, որ Հայաստանի բնակչութեան թիւը արագօրէն կը նուազի: Բնակչութիւնը այսօր՝ 2.5 միլիոն է, 2 միլիոն, թէ՞ աւելի նուազ: Պատճառները անվտանգութեան սպառնալիքն են, զիւղերու ծայրայեղ աղքատութիւնը, տնտեսական սահմանափակ կարելիութիւնները, թէ՞ մենք միշտ ունեցած ենք այս երեւոյթը, նոյնիսկ Յեղասպանութենէն առաջ: Ինչո՞ւ: Ի՞նչ կարելի է ընել այս հակումը դադարեցնելու կամ նոյնիսկ շրջելու համար: Այս հարցը լուրջ եւ բազմակողմանի քննարկումի նիւթ չէ եղած:



Հայաստանի եւ Սփիւռքի վերոյիշեալ եւ այլ գոյութենական սպառնալիքներու ընդդէմ, մեր ներքին պառակտումները Հայաստանի մէջ, Սփիւռքի մէջ եւ Հայաստանի ու Սփիւռքի միջեւ ընդունելի չեն կրնար ըլլալ: Հոս պէտք է ներառենք կործանարար, թէկուզ արդարացուած պառակտումները Հայաստանի ներկայ կառավարութեան եւ վարչապետին շուրջ: Հիմնական սպառնալիքներու հակադարձելու համար անհրաժեշտ է զարգացնել նուազագոյն ընդհանուր յայտարար մը, որուն շուրջ կարելի պէտք է ըլլայ համախմբուիլ: Եթէ քաղաքական կազմակերպութիւնները անկարող են ստանձնել այսպիսի կառուցողական դեր, ո՞վ կրնայ այդ դերը ստանձնել:

Վերջապէս, ո՞ւր պէտք է քննարկուին այս եւ լրացուցիչ գոյութենական մտահոգութիւնները: Ինչպէ՞ս կարելի է նման հարցեր ներկայացնել մտածող (աւելի քան մտաւորական) հայ վերնախաւին: Արդե՞ք մեզ կը հետաքրքրեն կամ կ'անհանգստացնեն նման հարցերը:

Այս յօդուածով եւ փորձեցի հարցեր արծարծել հիմնարար, դժուար ու զգայուն նիւթերու վերաբերեալ եւ չհամարձակեցայ տալ պատասխաններ, որոնք, անշուշտ, կը գերազանցեն մէկ անձի գիտելիքներն ու փորձը: Կը յուսամ, որ հարցումներս կը խթանեն հանրային բանավեճ մը եւ լուծումներու հաւաքական որոնում մը:

17 Մայիս 2024

ԱՍՊԱՐԷԶ

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆՆ ՈՒ ՄԵՐ ՊԱՏԱՆԻՆԵՐԸ

Յակոբ Միքայէլեան

31/05/2024

- 31 Մայիսի, 2024, ԱԶԳ շաբաթաբերթ



Սուրիա, 1963-էն ետք, իշխող կուսակցութեան որոշումով դպրոցական վերի կարգի աշակերտութեան պարտադրուեցաւ զինուորական տարագ կրել եւ այդ տարագով ալ դպրոց յաճախել: Սկիզբը, այս տարօրինակ կացութեան առջեւ անհանգիստ եւ անյարմար զգացիմք, թէեւ միատարր մեր տարագները որոշ նպատակ կը հետապնդէին: Դպրոցներուն մէջ զինուորական

դաստիարակութիւն պիտի ջամբուէր, քանի որ երկիրը պէտք է պատրաստուէր դիմակայելու թշնամական որեւէ յարձակում, իսկ երկսեռ երիտասարդութիւնն ալ պէտք է անպայման մասնակից դառնար երկրի պաշտպանութեան: Միանուագ տարագը նաեւ օգտակար եղաւ ծնողներուն, որոնք ձերբազատուեցան ամէնօրեայ հագուստ-կապուստի տաղտուկէն:



Շաբաթը մէկ օր բանակային սպայ մը կու գար, տեսական զինուորական գիտելիքներ կը փոխանցէր, աստէնը անգամ մըն ալ գործնական դասեր կ'անցնէինք, զէնքի գործածութեան, նշանառութեան եւ այլն:

Աւարտական դասարանի նախօրէին, ընդհանուր բանակում մը տեղի կ'ունենար տղոց համար, վրաններու տակ. երկու շաբաթ դպրոցականները զինուորի կեանքով կ'ապրէին: Իսկ աղջիկները կը հետեւէին շտապօգնութեան երկշաբաթեայ դասընթացքի:

(Այստեղ անհրաժեշտաբար ըսեմ, որ սուրիահպատակ երիտասարդը զինակոչի ենթակայ չէ եթէ ուսումը կը շարունակէ, նոյնիսկ մինչեւ դոկտորական, ոչ թէ Հայաստանի նման, որ 12-րդ կարգէն շրջանաւարտը արդէն զինակոչի ենթակայ է: Սուրիոյ մէջ նաեւ զինծառայութեան չեն կանչուիր ընտանիքին միակ արու զաւակները):

Զինուորական այս դաստիարակութենէն առաջ արդէն սփուռքի մեր ակումբներուն մէջ կը գործէին սկաուտական շարժումներ, նոր սերունդին յաւելեալ օգտակար դաստիարակութիւն ջամբելու համար: Ակումբներու մէջ սկաուտական շարժումները եւ անոնց ծրագիր-կանոնագրին համաձայն՝ պարման-պարմանուհիները ուղղել դէպի գիտակից, ազնիւ, բարեգործութեան նուիրուած, զոհաբերութեան ոգիով տոգորուած, ինքնավստահ սերունդ մը պատրաստելու ճիգերը պէտք է երեւային անոնց առօրեայ կենսակերպին, անոնց նիստուկացին մէջ, թէ չէ ինչ իմաստ ունէր տրուած դաստիարակութիւնը: Ասոր կու գար միանալու զինուորական դաստիարակութիւնն ալ եւ կ'ակնկալուէր, որ երկուստեք յաջողէին որոշ արեւելում մը տալ նոր սերունդին ի փառս Սուրիոյ եւ անշուշտ անոր ժողովուրդին:

Այստեղ, ի Հայաստան, խորհրդային տարիներուն կուսակցական պարտադրանքով եղած են պիոներական շարժումներ, վերելք յիշուած բարեմասնութեանց կողքին առաւել եւ ամենակարեւոր նպատակով ապագայի կուսակցականներ պատրաստելու հեռանկարով:

Հայաստանի մէջ ալ կրթական ծրագրի մէջ ներառուած է զինուորական դաստիարակութիւնը, անշուշտ պարզ է նպատակը՝ թշնամի երկու պետութիւններով աքցանուած երկիր մը կարիքն ունի ինքնապաշտպանութեան համար կոռուղ երիտասարդութեան:

Ես, որ կրթական ասպարէզի ծառայող մըն եմ, այստեղ չեմ տեսած ու չեմ զգացած որ մեր պատանիները զինուորական դաստիարակութեան կը հետեւին եւ չեմ ալ գիտեր, թէ ինչ լրջութեամբ եւ խստութեամբ, որովհետեւ կը տեսնեմ մեր պատանիներուն վարած արտադպրոցական կեանքը, քիչ մը սանձարձակ, անպատասխանատու, գրպանի հեռախօսով ժամեր սպաննող, ծխող, աղջիկներու հետ մտերմական պահեր որսացող... Անշուշտ ոչ բոլորը, սակայն ոչ արհամարհելի թիւ մը կայ ըսածներս հաստատող: Զինուորական դաստիարակութիւն ստացող պատանիէն պէտք չէ՞ ակնկալել, որ իր վարքուրաբքով տարբեր ըլլայ անդաստիարակներէն:

Եթէ հաւատացողներ կան, որ ներկայ խաղաղութեան գործընթացի յաջողութեան պարագային այլեւս ո՛չ թշնամի պիտի մնայ, ո՛չ մեր հանգիստը խանգարող, թող շատ չտարուին երազանքներով, թշնամին անկուշտ է, երախն ալ միչտ բաց է լափելու պատրաստ, զիտնանք ինչ «լափ» պիտի կերցնենք անոր, երբ «խաղաղութեան» մեղրամիսը վերջանայ. յիշեցէք Վարդան Այգեկցիին առակը ոչխարներու եւ գայլերու մասին:



Երբեմն սրտցաւ քաղաքացիներու կողմէ անհատական կոչեր կ'ըլլան զինավարժութեան, նոյնիսկ մասնաւոր կազմակերպութիւններ սկսած են մարզել պատանիները, ինչ որ օգտակար է, եթէ անշուշտ լաւ ծրագրուած է, այն ատեն երկիրը կը սկսի լրջօրէն ապրիլ ինքնապաշտպանութեան ոգիով, պատրաստակամութեան, որ յոյսով կը լեցնէ սրտերը եւ նաեւ հպարտութեամբ:

ՅԱԿՈՒՄ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

ՀԱՅԵՐՈՒ ԹՐՔԱՑՈՒՄԸ ԵՒ ՔՐՏԱՑՈՒՄԸ ԺԱՄԱՆԱԿԻ ԸՆԹԱՑՔԻՆ

Յարութիւն Իսկահատեան- Պէյրութ



Նախքան Կեդրոնական Ասիոյ թրքացեղ թափառական խումբերու պարբերական թափանցումը Արեւմտեան Հայաստան, հոն՝ իրենց պատմական Հայրենիքին մէջ մեծամասնութեամբ հայեր կ'ապրէին իրենց հողին վրայ, իսկ յոյներն ու քիւրտերը կը կազմէին փոքրամասնութիւն: Թրքացեղ ազգերը դարերու ընթացքին հաստատուեցան հայոց հողերուն վրայ եւ յետոյ մեծամասնութիւն կազմեցին, որովհետեւ անոնք հայերն ու յոյները բռնի թրքացուցին իրենց իսլամացումէն ետք, այդ ձեւով բազմացան եւ տեղաւորուեցան հայոց հողերուն վրայ եւ յետոյ ալ հայոց բռնագաղթեցուցին ու ցեղասպանեցին: Հայոց թրքացման արարքները սկսան ԺԱ. Դարու վերջաւորութեան ու շարունակուեցան մինչեւ Մեծ Եղեռնի տարիներուն եւ անկէ ետք ալ:

Այս հարցին շուրջ Գարեգին Ամատեան (Գ. Ամատունի) բաւական մանրամասն ուսումնասիրութիւն մը կատարած է եւ հրատարակած «Դարերու Ընթացքին Թրքացած Հայեր Քրտացած Հայեր» խորագիրով գրկոյկին մէջ, Պէյրութ, 1980, 104 էջ, որ օժտուած է օգտագործուած աղբիւրներու ցանկով:

Ուսումնասիրութեան սկիզբը հեղինակը՝ Գարեգին Ամատեան հետեւեալը կ'ըսէ. «Քրտերը եւ կիսով արաբական ժողովուրդները, որոնք 8-րդ դարուց սկսած, արաբական տիրապետութեան ժամանակ Հայաստան էին բերուել, ինչքան էին մօտաւորապէս: Բոլոր յիշեալ ժողովուրդները, որոնք Հայաստանի բնիկներուն թիւին համեմատուած, աննշան փոքրամասնութիւն էին կազմում, դարեր յետոյ ինչպէս են մեծամասնութիւն կազմել եւ բնիկները փոքրամասնութիւն դառել» (էջ 9): Հեղինակը կը քննարկէ թէ ինչպէս, ինչո՞ւ եւ ինչքան թիւով հայեր իսլամացուած են թրքացուելու համար ու կ'ըսէ. «Այս հարցերը կարելի է համարել հայ եւ թուրք պատմութեան մութ ծալքերը» «էջ 9»:

Թուրք պատմաբանները այս հարցերով չեն զբաղիր եւ անոր շուրջ լուռ կը մնան հասկնալիօրէն: Սակայն միւս կողմէ հայ եւ օտար պատմաբաններ ալ բաւարար չափով չեն քննէր այս հարցերը: Այս ուղղութեամբ Գարեգին Ամատունի կ'ըսէ. «Ուսումնասիրութեան ուղղութեամբ բացառութիւն են կազմում Ս. Հայկունիի եւ Հ. Հ. Տաշեանի ուսումնասիրութիւնները, Համշէնի եւ շրջակայ հայերի իսլամացման մասին եղածները: Շատ հայ հեղինակների կողմից կան հարեւանցի որոշ նշումներ, որոշ գիւղերի եւ ավանների հայերի բռնի իսլամացման վերաբերեալ, առանց սակայն լուրջ եւ խոր ուսումնասիրութեան առարկայ լինելու» «էջ 10»: Հարկ է նշել որ ժամանակին մամուլը գրեց թէ այս գծով Գանատայի մէջ թորոնթոյաբնակ Արմէն Քիրքճեան 2015-ին լոյս ընծայեց «Իսլամաց(ու)ած Հայեր» բաւական լուրջ ուսումնասիրութիւնը:



Հայաստանի բնակչութեան նկատմամբ մեծամասնութեան եւ փոքրամասնութեան մասին գաղափար կազմելու համար, պատմութեան ստոյգ տուեալներէն ամենէն գլխաւորը հետեւեալն է. 11-13 դարերու ընթացքին Կեդրոնական Ասիայէն ներխուժած սելճուքները, թուրքերը եւ մոնկոլ-թաթարները կը կազմէին 300-400 հազար հոգի, մինչ այնտեղ ապրող քիւրտերն ու կիսաքրտացած ժողովուրդները՝ 150 հազար: Բոլորը միասին դարձած էին կէս միլիոն իսլամ ժողովուրդ: Այդ ժամանակներուն Հայաստանի եւ շրջակայ հատուածներուն (Կապաթովկիա, Կիլիկիա, Ատրիք եւայլն) մէջ կ'ապրէին շուրջ երեք միլիոն բնիկ հայեր, կ'ըսէ Գ. Ամատեան աւելցնելով հետեւեալը. «Բացատրութիւնը պարզ է դառնում, որ դարերի ընթացքում տիրող թուրքերը իրենց հպատակ քրիստոնէայ ժողովուրդներին բռնի իսլամացնելով ձուլել են իրենց մէջ: Այսպիսով է, որ մեր օրերում (1900թ.) երբեմնի աննշան փոքրամասնութիւն կազմող թուրքերը եղել են մեծամասնութիւն եւ ճնշող մեծամասնութիւն քրիստոնէաները՝ փոքրամասնութիւն» (էջ 11):

Սելճուքներու ժամանակ եղած իսլամացումները ուղղակի պարտադիր կերպով չէին, այդ մէկը կը կատարուէր ոչ հաւաքական կամ զանգուածային ձեւով՝ այլ անհատաբար: Օսմանցի թուրքերը քրիստոնէաներու եւ մանաւանդ հայերու ներկայութիւնը իրենց պետութեան գոյութեան համար վտանգաւոր կը նկատէին: Հայոց գոյութիւնը Օսմանեան Պետութեան սկզբնական շրջանին երկրին մէջ մեծամասնութիւն էր, որ կը վախցնէր թուրքերը: Ուստի անոնք կ'ուզէին ամէն գնով վերջ տալ այդ վիճակին: Յստակ է թէ երբ ամէն գնով կ'ըսենք, սա կը նշանակէ իսլամացնելու բռնի ձեւերը, հիմնականօրէն կոտորածներով: Օսմանեան Պետութիւնը հայերը տկարացնելու ընթացքին առընթէտ կը զօրացնէր քիւրտերը, որովհետեւ անոնք իսլամ էին: Յաճախ թուրքերը կը գրգռէին քիւրտերը հայոց դէմ եւ անոնք հայոց ջարդեր կը կազմակերպէին:

Գարեգին Ամատեան Օսմանեան Պետութեան հայերը թրքացնելու արարքներուն մասին կ'աւելցնէ. «Թրքացումի նպատակին հասնելու համար, քրիստոնէայ հպատակների բռնի իսլամացումը իբր հարկադրական պետական քաղաքականութիւն ընդգրկեցին» (էջ 15):

Թրքացումը կամ իսլամացումը քաջալերելու համար օսմանեան իշխող դասակարգը զանազան բռնի եւ նաեւ հրապուրիչ կերպերու կը դիմէր: Գարեգին Ամատեան ասոր մասին կ'ըսէ. «Սուլէմանդ սուլթան Սուլէյման Կանունի (1520-1566) երկու օրէնքներ էր հրատարակել, մէկը իսլամների վերբերեալ, միւսը՝ քրիստոնէայ ռայաների: Առաջինով, իսլամները երկրում որպէս իշխող, բոլորովին առանձնաշնորհեալ վիճակ էին ստանում եւ իրաւունքներ վայելում: Երկրորդով՝ հպատակ քրիստոնէայ ռայաները ստրուկներ էին դառնում տիրողների համար: Այս օրէնքին նպատակն էր երկիրը իսլամացնել, տաճկացնել: Արդարեւ շատ քրիստոնէաներ, ազատուելու համար ստրկական վիճակից եւ իսլամների հաւասար իրաւունքներ վայելելու համար, կրօնափոխ էին լինում» (էջ 15):

Թուրքերը դարերու ընթացքին միլիոնաւոր հայեր իսլամացման միջոցաւ թրքացնելու արարքներուն զանազան միջոցները կիրարկեցին: Այդ հաւատափոխութիւնները բռնի կամ կամաւոր, երբեմն հաւաքական-զանգուածային եւ երբեմն անհատական տեղի կ'ունենային: Երկիր մը կամ քաղաք մը գրաւելէ ետք թուրքերը գերիները, այրերը թէ կիները կը ստիպէին իսլամ կրօնը ընդունիլ:

Թուրքերը քրիստոնէայ վանքերու եւ եկեղեցիներու կալուածները կը գրաւէին եւ զանոնք թուրք ու քիւրտ աւատապետերու կամ բարձրաստիճան պաշտօնէաներու կը նուիրէին: Վերջիններս օսմանեան կառավարութեան հրամանով այդ կալուածներուն մէջ աշխատող քրիստոնէաները կը ստիպէին իսլամութիւնը ընդունիլ, ապա թէ ոչ անգործ ու հետեւաբար անօթի եւ թշուառ պիտի մնային:

Ենիչերիները քրիստոնէայ եւ մանաւանդ հայ մանուկները կ'առեւանգէին, որոնք ինքնաբերաբար կ'իսլամանային: Թուրքերը քրիստոնէաներուն վրայ դրած տուրքերը անհամեմատաբար կը բարձրացնէին: Այդ խեղճերուն համար իսլամանալն ու թրքանալը



փրկութեան միակ ճարը կը դառնար, որպէսզի հեռու մնան կեղեքումներէ ու հալածանքներէ: Անոնք կը ձգտէին թուրքին հաւասար ապրիլ:

Այլ պատճառ մըն ալ կար քրիստոնէաներուն համար իսլամանալու: Օսմանեան Պետութեան մէջ միայն իսլամն էր որ ժառանգելու իրաւունք ուներ: Ուստի քրիստոնէան իր ֆիզիքական գոյութիւնը պահպանելու եւ իր պապենական ինչքերն ու ստացուածքները ժառանգելու համար ստիպուած էր իսլամանալ:

Թրքական գրպարտութիւնը այլ պատճառ մըն էր քրիստոնէային իսլամանալու, պատիժէ կամ աւելին՝ մահէ փրկուելու համար ան կ'իսլամանար, որովհետեւ թուրքերուն գլխաւոր գրպատութիւնն էր ըսել այսինչը «կրօնքիս հայեոյեց» աժան ու սուտ ամբաստանութիւնը:

Իսլամը գլխահարկ (խարաճի) չէր վճարեր, որ քրիստոնէային համար շատ ծանր տուրք մըն էր, որմէ ազատելու համար ալ ան կ'իսլամանար:

Հեղինակը՝ Գարեգին Ամատեան, իսլամանալու պատճառներուն մասին այլ բացատրութիւններ տալէ ետք, իբրեւ իր պրպտումներուն արդիւնքը կը ներկայացնէ բազմաթիւ հայկական քաղաքներու եւ գիւղերու ամբողջական կամ մասնակի իսլամացմամբ՝ թրքացման կամ քրտացման պատմութիւնը, սկսելով Համշէնի շրջանէն: Այդ բնակավայրերը հետեւեալներն են.- Մեւ Գետ, Լազիստան, Թորթում, Տայոց Նահանգ, Բաբերդ, Կարին, Արտահան, Ախալցխա, Արդուին, Բայազիտ, Խնուս, Քղի, Երզնկա, Կամախ, Ակն, Արաբկիր, Տերսիմ, Չարսանձագ, Չմշկաձագ, Խարբերդ, Բալու, Պաղին, Արդանա, Մալաթիա, Տարօն, Սասուն, Բաղէշ, Վասպուրական, Տիգրանակերտ, Ուրֆա, Մեքաստիա, Եվրոկիա, Ամասիա, Կիւրին, Կապաթովկիա, Շապին Գարահիսար, Մարաշ, Այնթապ, Ատանա, Սիս եւ Հաճըն:

Մեր օրերուն նկատառելի կէտ մըն էր այս հարցին առնչուող այն պարագան, որ Թուրքիոյ մէջ մօտ տասնամեակ մը առաջ երբ ծինային ծագումնաբանական քննութիւններ սկսան կատարել, մեծ թիւով թուրք կամ քիւրտ կարծուած անձերու ծինային ծագումը հայկական եւ աւելի քիչ թիւով յունական ու ասորական էլաւ, այդ պատճառով այդ քննութեան արդիւնքները համացանցի վրայ հրապարակելը արգիլուեցաւ թրքական իշխանութիւններու կողմէ:

(Իր դիմատետրի էջէն)

ՏԵՍԱԿԷՏ

ՈՒՐԿԷ՞ ՄԵԶԻ ԱՅՍՔԱՆ ԱՏԵԼՈՒԹԻՒՆ

Լիւսի Տօքմէճեան, Երեւան, 28 Մայիս 2024, ԳԵՂԱՐԴ



Օտարազգի մարդ մը իր մահէն ետք դէմ-յանդիման կը յայտնուի Գաբրիէլ հրեշտակապետին: Վերջինս մահացած մարդուն կեանքին պատմութիւնը աչքէ անցընելէ ետք զայն կ'ուղարկէ դժոխք: Հազիւ ոտքը ներս նետած, մարդը կը տեսնէ կրակի վրայ դրուած մեծ կաթսաներ, իւրաքանչիւրին վրայ գրուած ազգերու անուններ: Ամէն մէկ կաթսայի կողքը կայ փոքր սատանայ պաշտօնեայ՝ ձեռքին եռաժանին: Փորձելով պատկերացում մը կազմել եղելութեան մասին, դռնապանին հարց կու տայ



կաթսաներուն եւ սատանայ պաշտօնեային կապին մասին: Կաթսաներուն մէջ եռացող ջուրին մէջ կը գտնուին դժոխքի բաժին դարձած՝ այդ ազգին պատկանող անհատները, որոնք եթէ փորձեն դուրս գալ կաթսայէն, հսկիչ սատանան իր եռաժանիով զանոնք վերստին ներս կը հրէ: Մարդուն ուշադրութիւնը կը գրաւէ վրան «Հայ» գրուած կաթսան, որ չունի հսկիչ սատանայ: Դժգոհանքով կը բողբոջէ այդ խտրականութեան համար, որով հայերը հնարաւորութիւն ունին չհսկուող կաթսայէն դուրս գալու: Դռնապանը մարդը կը հանգստացնէ՝ ըսելով, թէ հայերը հսկիչ պահակ չունին, քանի որ կաթսային մէջ գտնուողները վար կը քաշեն փախչիլ ու ազատիլ փորձող իրենց ազգակիցը:

Հայ հանրութեան մէջ պատմուող այս անեկդուր խորքին մէջ ծիծաղելի ըլլալէ աւելի՝ ցաւալի է, եւ դժբախտաբար, իրականութեան հետ մեծ աղերս ունի: Պատմութեան մէջ բազմաթիւ են հայի ձեռքով հայուն հասած վնասները, հաւանաբար նոյնքան՝ ինչքան մեզի վնասած են մեր թշնամիները: Թերեւս աւելի ճիշդ պիտի ըլլայ ըսել, որ մեր թշնամիները յաջողած են մեզի ամենագորաւոր հարուածները տալ, որովհետեւ շօշափած են մեր՝ իրարու հանդէպ անհանդուրժողականութիւնը:

Խօսելով անհանդուրժողականութեան մասին, անկարելի է չանդրադառնալ վերջին տարիներուն այդ ախտի ամենացայտուն դրսեւորման եւ չարտցաւիլ ի տես այդ փաստին: Արցախեան 44-օրեայ պատերազմը մեր արդի պատմութեան ամենէն չարաբաստիկ, անկինսադարձային էջերէն մէկն եղաւ, 1999 թուականի Հոկտեմբեր 27-ին պետութիւնը զլիսատելու ոճիրին առընթեր: Պատերազմին ողբերգական աւարտը հիմք հանդիսացաւ, որ Հայաստանի Հանրապետութեան իշխանութիւն-ընդդիմութիւն եւ անոնց համակիր հայորդիներուն միջեւ արդէն գոյութիւն ունեցող վիճիւր աւելի խորանայ: Ու սկսան հնչել դաւաճանութեան ամենասուր մեղադրանքները, ատելութեան ամենասուր արտայայտութիւնները:

Ես չեմ հաւատար, թէ ոեւէ ղեկավար կը փափաքի իր մղած պայքարին մէջ պարտուիլ: Բացարձակապէս ոչ ոք կը փափաքի «պարտուած ղեկավար»ի տիտղոսը կրել, ուր մնաց «դաւաճան»ի խարանով պսակուիլ: Ոչ ոք «կը խաղայ» պարտուելու համար: Մենք 2020-ին մտանք «խաղ»ի մը մէջ, ուր հաստատ չէինք ուզեր պարտուիլ, այն ալ այդ ձեւով: Չկայ առաջնորդ մը, որ ուզէ իր բանակին եւ քաղաքացիական հասարակութեան շարքերէն այդքան զոհ տալ ու հողային տարածքներ կորսնցնել, թէեւ զոհերն ու կորուստները անխուսափելի են վերջաւորութեան պատերազմը «յաղթած կողմ» յայտարարուածին համար նոյնիսկ: Այո՛, մեզ ներքաշեցին պատերազմի մէջ, բայց ինչ-ինչ պատճառներով՝ պարտուեցանք: Անհեթեթութիւն է այդ պատճառները մէկ հոգիի վրայ բարդելը: Փաստօրէն մենք երկու ճակատի վրայ պարտուեցանք. թէ՛ թշնամիին եւ թէ՛ մեր սեփական ազգին դէմ: Այն օրէն սկիզբ առած ատելութիւնը մեզ որպէս ազգ տկարացուց, կործանեց... եւ տայ Աստուած՝ ոչ-անդառնալի չափով:

Եւ այսօր մենք իրարու դէմ այնքան թշնամանքով, այնքան ատելութեամբ տրամադրուած ենք, որ մեր Հայրենիքի՝ Հայաստանի Հանրապետութեան շուրջ սաւառնող, մեր ինքնիշխանութեան եւ անկախութեան սպառնացող վտանգները մէկ կողմ թողած, զբաղուած ենք զիրար անպատուելով, ի չիք դարձնելով Գեորգ Էմինի «Զգոյշ խօսիր Հայաստանում» քերթուածին մէջ արտայայտուած միտքը, ուր բաժան-բաժան, անմիաբան, զատուա՛ծ, հատուա՛ծ հայը մի է երբ կը սպառնայ թշնամին:



Ո՛չ, մենք նոյնիսկ թշնամիին դէմ չենք միաւորուած հիմա: Մեր համազգային սուգին մէջ ալ չենք միաւորուած: Գիտենք նոյնիսկ պղծել մեր նահատակներուն յիշատակը: Գիտենք հային մահը ցանկալ, հային երեխաներն ու գալիք սերունդները անիծել, եղբայրասպանութիւն բեմադրել ու քաջալերել: Գիտենք հաւատալ թշնամիին տարածած հակահայկական քարոզչութեան եւ անհաւատի կասկածանքով մօտենալ մեր բարօրութեան միտող իւրաքանչիւր քայլի: Գիտենք ներքին թշնամիներ փնտռել, մեր պետականութիւնը խաթարող հազարումէկ կեղծիք յօրինել, սուտեր տարածել, գիտենք հայն ու Հայաստանը նուաստացնել, մեր միայն սեւ կողմերը մատնացոյց ընել... Ահա՛ այսպիսի չարութեամբ լեցուած ժողովուրդ մը դարձած ենք:

Մեր ազգին պառակտումը ո՞վ պիտի կասեցնէ, անմիաբան զաւակները ո՞վ պիտի միացնէ, ո՞վ պիտի հաշտեցնէ, ո՞վ ատելութեան ու թշնամանքի խօսքին վերջ տալու կոչեր պիտի ուղղէ: Այդ պէտք է կատարէր հոգեւոր կառոյցը՝ Հայ Եկեղեցին, որ, դժբախտաբար, չէ յաջողած ազգի բոլոր զաւակներուն հետ նոյն հեռաւորութիւնը պահել: Հայ Եկեղեցին է որ պիտի իր հայրական հովանին սփռէր եւ միաւորող համազգային դերակատարութիւն ունենար:

Լեո Կամսար իր «Հալոցք» վերնագիրով գրութեան մէջ կ'ըսէ. «Օտար պետութիւնները երբ պատերազմում են իրար դէմ, վերջ ի վերջոյ հաշտութեան պայմանագիր են կնքում: Բայց հայ ցեղի այս բաժան մասերը մի բոպէ զինադադար անգամ չեն կնքում: Այն ատելութեամբ, որով ատում են Հայաստանի այս կուսակցութիւնները իրար, եթէ թշնամու դէմ դուրս գային, նրանց դէմ ոչ թուրք, ոչ պարսիկ, ոչ բոլշեւիկ կը դիմանային...»:

Մեր թշնամիները պիտի չչքանան, բայց պէտք է անոնց դէմ դնել Սարդարապատի՛ հոգեբանութեամբ: Սարդարապատը հայութեան համար մահու-կենաց պայքար էր, որ իրաւացիօրէն դարձաւ խորհրդանիշ համաժողովրդային կամքի, միասնականութեան ու վճռականութեան: Ի սպառ վերանալու սպառնալիքը օրին գորաշարժի ենթարկեց ամբողջ ազգը: Մեր ժողովուրդն ու երկիրը դատապարտուած են ունենալու նոր Սարդարապատներ, սակայն անիրատեսութիւնը, կեղծիքը, թշնամանքը, յուսահատութիւնը կ'արգելակեն մեր գործունակութիւնը եւ կը դառնան աղէտ մեր ազգին ու պետութեան համար: Կոտորածի ենթարկուած, տարագրուած, հիւժած ազգը Ցեղասպանութենէն միայն երեք տարի ետք եթէ կրցաւ միասնականօրէն ոտքի կանգնիլ, հիմա ալ կրնայ, միայն թէ պիտի հաւատայ, որ ***իր հայ եղբայրը իր թշնամին չէ՛:***

ՊՐԻՍՄԱԿԷՍ

ՄՊԱՍՈՒՄ ԵՒ ԼԱԻԱՏԵՍՈՒԹԻՒՆ

Մարուշ Երամեան



Ինչպէ՛ս կարելի է Յոյսը արթուն պահել, երբ շրջապատուած ենք այնքան դեպքերով, որոնք ոչ միայն վիատեցուցիչ են, այլ անոնց անվերջանալի, անընդհատ շարունակուող կացութիւնն է որ կը խոչընդոտէ կարծես ամէն նոր ծիլ:

Բայց, ինչպէս կ'ըսուի, յոյսը ամէնէն

վերջինը կը մահանայ մարդ արարածին հոգիին մէջ:

Իսկ երբ յոյսը անհիմ կամ անգուսպ կերպով կը ծաղկի, կրնայ նաեւ վնասել, կրկնուող յուսախաբութիւններու որպէս արդիւնք:

Ուրեմն՝ կարելի՞ է զգուշութեամբ մօտենալ յոյս ըսուածին եւ գայն արթուն պահել:

Հաւանաբար յուսալու «անսրբագրելի» վիճակն է, որ մարդուն կը դնէ մի՛շտ սպասողական վիճակի մէջ, ընդհանրապէս՝ լաւ բան մը սպասելու յոյսով:

Կը պատահի սակայն, որ կրկնուող աղէտներու դիմաց մարդ կը սկսի վախնալ նոյնիսկ ... առտուն արթննալէն:

Հաւաքական սուգը - ինչպէս որ էր Ջարդին անմիջապէս յաջորդող շրջանին - կրնայ ահաւոր դեպքի մը ցնցումին տակ դրական արդիւնքներ տալ: Շատ հաւանաբար այս պարզ ճշմարտութիւնն էր, որուն զիտակից չէին թուրքերը, երբ ճիգ կը թափէին «մէկ հայ, ան ալ՝ թանգարանին մէջ» պահել:

«Յոյսը կոտորած սրտով լաւատեսութիւն մըն է»:

Տարբերութիւն կա՞յ յոյսին եւ լաւատեսութեան միջեւ:

Աշխարհի երեսին կա՞յ ազգ մը, որ հայ ազգէն աւելի լաւատես է իր խառնուածքով:

Չեմ կարծեր:

Եթէ դիտենք միայն մեր հաւաքական կեանքի վերջին գրեթէ կէս դարը՝ 1975-էն սկսեալ (կրնանք նաեւ այդ դիտումը սկսիլ 1962-էն, երբ Սուրիոյ մէջ պետութիւնը բռնագրաւեց անհատական մեծ եւ փոքր ձեռնարկութիւններ, ինչ որ պատճառ դարձաւ հայերու մեծաթիւ գաղթին դէպի դրացի Լիբանան), պիտի տեսնենք, որ աղէտները իրարու յաջորդած են, գրեթէ առանց դադարի, ըլլան անոնք բնութեան թէ մարդկային աղէտներ՝ Լիբանանի քաղաքացիական պատերազմը, ինչպէս ըսինք, Կիպրոսի բռնագրաւումը, Պարսկաստանի կրօնական յեղափոխութիւնը, ապա հազիւ տասնամեակ մը անցած՝ Հայաստանի երկրաշարժը, ապա՝ Սուրիոյ պատերազմը, ապա՝ Հալէպի երկրաշարժը ...

Այս դեպքերը Հայաստանի մէջ չէ որ տեղի կ'ունենան, այո, բայց այս բոլոր երկիրներուն մէջ ալ հայերը կազմակերպուած գաղութներ ունեցած են. երբ նման աղէտներ կը պատահին, կազմակերպուածութիւնը կ'օգնէ, որ այդ գաղութներուն անդամները անմիջապէս օգնութիւն ստանան. բայց կարելի չէ՞ որ նման աղէտներ, գոնէ մարդոց եւ պետութիւններու ձեռքով ստեղծուած աղէտներ չըլլան ...

Կարծես «Լորընս աֆ Արապիա»-ի խօսքերը անիծած ըլլան մեզ, կամ... դաս տուած մեր թշնամիներուն:

Ամերիկացի թղթակից Լինոլն Սթէֆֆընզ (Lincoln Steffens) 1919 թուականին հարցազրոյց մը վարած է, Արաբիոյ Լորընսի հետ Փարիզի անոր պանդոկին սենեակին մէջ եւ որուն համար կ'ըսէ, թէ «կեանքիս ամէնէն տարօրինակ հարցազրոյցներէն մէկն էր»:



«Նպատակս էր Բրիտանական կայսրութեան այս ռահվիրայէն բան մը իմանալ եւ սորվիլ Փոքր Ասիոյ եւ Մերձաւոր Արեւելքի գործնական քաղաքականութեան մասին»:

«Կը կարծէի թէ ե՛ս կ'ուղղեմ հարցազրոյցին ընթացքը: Բաւական ուշ եւ ցնցումով անդրադարձայ, թէ ինք, Արաբիոյ Լորընս եւս յստակ նպատակ մը ունէր եւ հարցազրոյցը ա՛յդ ուղղութեամբ կը տանէր՝ հայերու նկատմամբ ամերիկեան հովանաւորութեան (mandate) համար փրոփականտով ողողել զիս»:

«Չէի հասկնար, կը շարունակէ Սթեֆֆընզ, թէ ինչո՞ւ մենք, ամերիկացիներս պետք է աշխարհի կէտը կտրենք որ ստեր կանգնինք հայերուն եւ փրկենք զիրենք ոչ միայն թուրքերէն, յոյներէն, ֆրանսացիներէն, իտալացիներէն, բրիտանացիներէն եւ զիրենք իրենցմէ, այլ ձեռով մը նսեւ փրկելու մեզ մեզմէ եւ իրենցմէ»:

Այս թղթակիցը կ'ըսէ, ինք կը կարծէր թէ Արաբիոյ Լորընս որոշ համակրանք ունի հայերուն հանդէպ, կամ որոշ գիտելիքներ եւ կենսափորձ՝ հայերուն առնչուած, ուրկէ ալ իբր թէ «իրեն ըմբռնել տուած են թուրքերուն (եւ հայերուն բոլոր դրացիներուն) մոլուցքը՝ հայերուն անընդհատ սպանել փորձելու»:

«Ինք կը կարծէր թէ հայերուն դէմ ըլլալիք միակ արարքն է ասիկա. անշուշտ այդպէս չըսաւ. կը տեսնէք թէ չեմ չակերտած այս խօսքերը. հասկցայ որ իր ոճը ըսելը չէ, այլ ըսել եւ հրատարակել տալ այն, ինչ որ կ'ուզէ ըսել, ի՛մ բերնովս, որպէսզի կարենայ յետագային, անհրաժեշտ պարագային, հերքել այդ բոլորը»:

«Չըսաւ թէ պէտք է հայերը սպաննել, պարզապէս ակնարկեց, որ հայկական հարցին միակ լուծումը ա՛յդ է»:

Ամբողջ հարցազրոյցը կարդալը եթէ կ'արժէ հասկնալու համար մեծ պետութիւններուն խաղը, միւս կողմէ սակայն այնքա՛ն դժուար է ընդունիլ զօրաւորին անմարդկային արարքները:

Անէ՞ծք է ասիկա մեր ճակտին թէ ...

Բայց հակառակ այս բոլորին, կը շարունակենք լաւատեսութեամբ արթննալ, փառք տալ Աստուծոյ որ օր մը եւս արթնցանք, օր մը եւս առիթ ունեցանք արելը վայելելու: Կ'արթնանանք ամեհնէն սարսափելիէն՝ երկրաշարժէն եւ հազիւ մենք մեզ գտած, կը փութանք օգնելու մեր կողքիներուն, անկախ անոնց ազգութենէն եւ կրօնքէն:

Ու կը կարծենք, թէ կեանքը պիտի հատուցէ մեր բարիքը:

Չե՞նք գիտեր որ այդպէս չէ :

Գիտե՞նք:

Բայց զիտենք նսեւ, մե՛նք, բիրտ անգամ մահացածներս, բայց բիրտ եւ մէկ անգամ յարութիւն առած ազգս, զիտենք որ յոյսն է կեանքին ամեհնէն գեղեցիկ զգացումը, որ հաւատք կը ներշնչէ եւ կը թելադրէ բնութենէն օրինակ առնել:

Եթէ ոչ հատն ցորենոյ անկեալ յերկիր մեռանիցի, ինքն միայն կայ. ապա եթէ մեռանի՝ բազում արդիւնս առնէ:

Երբ աշխարհը դէմքը միւս կողմ կը դարձնէ, չտեսնել ձեռացնելով Արցախի բռնագրաւումը (որ, ի դէպ, առաջինը չէ թուրքերու «սխրագործութիւններուն»), չի կրնար տեսնել արցախցին, որ իր լուսնն կը նուիրէ իր կողքինին, որուն վիճակը իրմէ շատ նուազ է, չի կրնար տեսնել իսլամը, որ եկեղեցիին մէջ մում կը վառէ, կամ քրիստոնէան, որ իր թաղի մզկիթին մէջ պատսպարուած է.

Եւ որովհետեւ աշխարհը չի տեսնէր այս բոլորը, աւելի եւ աւելի կը կորսնցնէ իր մարդկայնութիւնը ...

Ուշքի՛ եկ, աշխարհ ...

<http://www.kantsasar.com/news/50271-2/>

ԹՈՒՐՔԵՐԸ ՀԱՅԱՎԱՆՈՒԹԻՒՆԸ - «ԹՈՒՐՔԵՐԻ ՀԱՄԱՐ՝ ԳՈՅՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆԸ ՀԱՅԵՐԻ ԶԳՈՅՈՒԹԻՒՆՆ Է»

Մանուէլ Սարգսեան Արցախիցի հանրաձանօթ քաղաքական փորձագէտ, 24 ապրիլ 2024



Հայոց ցեղասպանութեան զոհերի յիշատակի օրուան ընդառաջ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւն ասել է, որ տարբեր երկրներ զինում են Հայաստանին, որ դա արւում է Ադրբեջանի դէմ և որ Ադրբեջանը դա չի հանդուրժի, անհրաժեշտութեան դէպքում միջոցներ կը ձեռնարկի:

Ալիեւի այս յայտարարութիւնը (ի դէպ, առաջին անգամ չի արւում) կարելի էր տարբեր կերպ բացատրել: Բայց, կարծում եմ, շատերի համար կարող է համոզիչ լինել մէկ բացատրութիւն՝ հայկական պետութեան հզօրացման ու զարգացման համար արւող ամէն ինչ ընկալւում է որպէս սպառնալիք Ադրբեջանին:

Ադրբեջանի հասարակութեան և իշխանութիւնների մէջ կախում է հատուցման ինչ-որ խորհրդաւոր (միատիկ) վախ: Եւ դա հիմա տեղի չունեցաւ: Յիշում եմ խորհրդային ժամանակները, երբ Ադրբեջանի շրջաններից մէկում հայկական ճարտարապետութիւնն ուսումնասիրելիս հանդիպեցի ադրբեջանցիների մի խմբի: Հարցրին՝ ինչո՞ւ են մեր պապերը միշտ ասում, որ մի օր հայերը կը գան այստեղ և մենք բոլորս կը գնանք այստեղից:

Նրանք բացատրութիւն չխնդրեցին, նրանք ժպտացին և ասացին, որ իրենք էլ գիտեն ինչու: Ինձ համար բացայայտում էր, թէ հայերի կողմից հատուցման վախը որքան խորն է նստած այս մարդկանց մէջ: Ինչպէս մեր հայերից շատերը չեն կարողանում ազատուել պատմութեան վախից, այնպէս էլ հայերի հատուցման առեղծուածային վախը նստած է ադրբեջանցիների մէջ: 1990-ականների մեր պատմութեան մէջ մենք տեսանք վախի այդպիսի դրսեւորումներ:

Ուսումնասիրելով Թուրքիայի իշխանութիւնների վարքագիծը՝ կարելի է նկատել, որ նոյն վախի համախտանիշն առկայ է թուրք ազգի մէջ: Կարելի է զարմանալ, թէ այս պետութիւնը որքան միջոցներ է ծախսում Ցեղասպանութեան ժխտման քաղաքականութեան վրա: Թւում է, ինչո՞ւ պէտք է վախենան փոքրիկ Հայաստանի Հանրապետութիւնից: Բայց, ըստ երեւոյթին, միայն իրենք գիտեն, թէ ո՞րն է այս վախի պատճառը: Ալլահի՛ց են վախենում, գերտերութիւնների՞ց, թէ՞ էլի վախենում են հայերի հատուցումից:

Հայաստանի և թուրքերի ու ադրբեջանցիների յարաբերութիւնների կարգաւորման խնդրով զբաղուողները պէտք է լաւ գիտակցեն իմ նկարագրած երեւոյթը: Առանց այդ փոխադարձ վախը վերացնելու նպատակաւորուած աշխատանքի, դժուար թէ հնարաւոր լինի բարենպաստ պայմաններ ստեղծել հարեւան ժողովուրդների բնականոն համակեցութեան



համար: Ոչինչ կ'իրագործուի միայն միամիտ կոչերով՝ վարուել ջանասիրաբար, մոռանալ Արարատի համայնապատկերը, Ադրբեջանին հաճոյանալու համար փոխել Սահմանադրութիւնը և, ընդհանրապէս, ամէն ինչում ծառայել թուրքերին: Այդ ամէնն անհմաստ է: Որովհետև, նրանց համար, դա կեանքի՝ հարց է:

Յայտնի թուրք գիտնական Թաներ Աքչամը ասել է. «Թուրքերի համար՝ գոյութեան պայմանը հայերի չգոյութիւնն է»: Ինչո՞ւ են այդպէս մտածում՝ միայն իրենք կարող են հասկանալ: Եւ միայն իրենք գիտեն, թէ որտեղի՞ց է գալիս կեանքի այս խորհրդաւոր (միստիկական) սրամաքանութիւնը: Մեր գործն է լաւ իմանալ բոլոր (պարտադրաբար՝ մեզ հարեւան – ԳԵՂԱՄԴ) ազգերի հոգեբանական առանձնայատկութիւնների պատճառները՝ նրանց հետ մեր յարաբերութիւնները ճիշտ կառուցելու համար: Տարածաշրջանի ժողովուրդների դարաւոր թշնամանքի պատճառների մասին մեզ չենք կարող խաբել պարզունակ յօրինուածքներով: Խնդիրները պետք է ճիշտ ձևակերպուեն, այլապէս մենք ստիպուած ենք լինելու ապրել հոգեբանական այս թակարդում եւս հարիւր տարի:

ԳԵՂԱՄԴ-ի խմբ. ծանօթ.– Խնդիրները եթէ մենք ճիշդ չձևակերպենք եւ ճիշդ չհասկնանք, աւելի որոշակի՝ չհասկնանք, թէ թուրքերը ունին հայութիւնը առհասարակ վերացնելու ազգային ծրագիր, շատ հաւանական է, որ հարիւր տարի տեւելիք թակարդ ալ չըլլայ, քանզի հայը կրնայ մինչ այդ վերանալ իբրեւ պետականութեան տէր ազգ:

ՄԻՆՉԵՒ ԵՐԲ

«Լծուած տէրերի շառաչուն կառքին՝

Հոնդում էք դուք այդտեղ վայրահայ,

Ժանգոտած սուսեր ձեռքերիդ պահում՝

Անկում էք կարդում իմ նոր աշխարքին»:

Եղիշէ Չարենց



Ժողովրդավարութիւն, խօսքի ազատութիւն, հայրենիք, պետականութիւն, իշխանութիւն, կրօն, իմաստութիւն, բարեկրթութիւն, իմացականութիւն եւ նման յատկութիւններ բարոյական անգնահատելի արժէքներ են եւ մարդ արարածի մենաշնորհը, պայմանով, որ այդ արժէքները գիտակցուեն եւ գնահատուեն համայն հասարակութեան կողմից:

Յաւօք տարրական այդ յատկութիւնները յարգուած եւ պահպանուած չեն ումանց կողմից մեր աւետեաց երկրում, եւ երիցս ցաւալի է, մինչեւ իսկ ողբալի, ինչ տեղի է ունենում այս օրերին Երեւանի փողոցներում: Ի սկզբանէ նշեմ, որ մենք ոչ միայն դեմ չենք այլախոհ գաղափարախօսութեան կամ ընդդիմադիր գործունէութեան, միայն թէ ցանկալի կը լինէր,



որ այն լինէր յագեցած առողջ որոշակի ծրագրով եւ կառուցողական հիմունքներով, ուր թացն ու չորը, սենն ու ճերմակը իրարից տարբերուում են, իսկ հիմնական նպատակը ամեն գնով իշխանութիւն գրաւելը չէ, մինչեւ իսկ դրսից հրահանգուած, հակառակ դէպքում այն դառնում է կլանային պայքար, իմա՝ ներքին պատերազմ: Գրեթէ այդ է կացութիւնը մեր երկրում, ուր զինուած խմբակներ են յայտնաբերուել:

Դժուար է հարց չտալ թէ՛

ա. Մինչեւ ե՞րբ օրինական ընտրուած իշխանութեան դէմ, հինգերորդ տարին է արդէն, անդադար թիրախաւորուած ամեն տեսակի ցեխանետումներ եւ լուտանքներ պիտի տեղան, նոյնիսկ, եթէ այն կատարեալ չէ եւ որոշ թերացումներ կան: Այն կարելի չէ՞ բարեկիրթ ձեռով ներկայացնել եւ քննարկել, քանի որ այդ նպատակով է ստեղծուեմ ԱԺ-ը, ուր կարելի է եւ ընդունելի՝ ունեցած **«տաղանդաւոր»** ծրագրեր ներկայացնել: Ո՞ր երկիրն է անթերի:

բ. Մինչեւ ե՞րբ մեր քաղաքական գործիչները պիտի կարողանան հասկանալ եւ տարբերել անհատը՝ վարչապետը եւ պետականութիւնը: Նրանք տարբեր հարթութեան վրայ են, եւ մինչեւ ե՞րբ կարելի է կրկնել, թէ վարչապետի բոլոր քայլերը թելադրուած կամ պահանջուած են Ալիեւի կողմից: Այդ բոլորը վաղուց ձանձրալի են եւ դողմախի համ ունեն:

գ. Մինչեւ ե՞րբ հայրենիք թէ սփիւռք եւ հայ մամուլի որոշ տեսակը պիտի շարունակի իր թշնամական բացայայտ դիրքորոշումը, եւ երկրում եղած ամեն ինչը տեսնել միայն գորշ գոյներով:

Ոմանց համար այն դարձել է արհեստ եւ կան վարպետ յօդուածագիրներ, որոնք մրցում են, թէ ո՛վ ավելի թունդ ու կծու խոցելի տողեր կը գրի, իսկ բարեկիրթ լինելը արգելուած է տիրող կեղծիքի համեմատ: Այս ոհմակին են միանում մոռացուած նախկին պետական պաշտօնեաներ՝ թելադրելով, որ եթէ իրենք գրաւեն վարչապետի աթոռը, ապա կը փրկեն երկրի կործանումը հաշուած օրերի ընթացքին: Ողբանք, խնդանք թէ՛ լանք:

դ. Մինչեւ ե՞րբ կարելի է հանդուրժել, — որքան էլ մեծ լինի մեր համարումը, — եկեղեցւոյ եւ նրա պաշտօնեաների անհանդուրժելի, իմա՝ թշնամական դիրքը եւ վերաբերմունքը հայրենի իշխանութեան հանդէպ: Իշխանափոխութեան առաջին օրերից բազմիցս գոյգ կաթողիկոսները միաբերան վարչապետի հրաժարումը պահանջեցին, որի շարունակութիւնը եղաւ Բագրատ Գալստանեանի խաչակրաց արշաւանքը դէպի Երեւան, այս անգամ վարչապետի աթոռին բազմելու:

յաւակնութեամբ, որ անշուշտ իր վերադասի եւ ստուերային միջնորդների նախաձեռնութեամբ է թելադրուած:

ե.- Մինչեւ ե՞րբ թոյլատրելի է սեփական ժողովրդի մի մասին թուրքի պիտակ փակցնել ու պախարակել միեւնոյն ժամանակ գոռալ թէ՛ հոգեւոր Հայաստանը յաղթելու է ներկայ Հայաստանին:

Տխմարութիւն:



Այս հարցումները կարելի է դեռ շարունակել, բայց խնդիրը դրանով լուծում չի գտնում:

Չմոռանանք, որ հայիոյանքը միայն թուլութեան եւ փաստերի բացակայ լինելու նշան է, ինչպէս նաեւ իւրաքանչիւրի իր անձնական պարտաւորութիւնների եւ դիրքի ունեցած կարելորութեան գիտակցութեան բացակայութիւնը:

Այս բոլոր տխմարութեան համագոր արարքները վստահաբար դատապարտուած են ձախողութեան եւ ոչ մէկ ցանկալի արդիւնք կարող են պարգեւել հայրենի առօրեան խառնակողներին, բացի մեծ քայլերով երկիրը դէպի կործանում երթը ապահովելուն:

Հասկացողին հազար ողջոյն:

Ռուբէն Յովակիմեան

ՄԱՀՄԱՆՔ ՔԱԶԱՅ ԶԷՆ ԻՒՐԵԱՆՑ



Քաղաքականութիւնը ինքնին թե՛ արուեստ է թե՛ ակադեմական գիտութիւն: Քաղաքական գործիչին արտասանած ամէն մէկ բառը, պարզ զեղում չէ այլ մտածուած եւ հաշուարկուած խօսք, որ կրնայ խոր ազդեցութիւն ունենալ հանրային կարծիքին վրայ, քաղաքականութիւն ձեւաւորել, նոյնիսկ պատմութեան ընթացքը փոխել, հետեւաբար գործիչին ամէն մէկ խօսքը պետք է արտացոլացնէ հաւասարակշռուած եւ հետագայ քաղաքական գործունէութեան պատասխանատուութիւնը. իսկ ամէն մէկ սխալ արտայայտութիւն կրնայ ունենալ ճակատագրական հետեւանքներ, ըլլան անոնք ուղղուած

ներքին լսարանին վրայ, միջազգային ստեաններուն կամ միջ-պետական դիւանագիտական բանակցութիւններուն ընթացքին: Ժողովրդավարական համակարգերու մէջ, բառերու ճիշտ օգտագործումը կրնայ հանրութիւնը յոյսով լեցնել, միասնականութիւն ստեղծել եւ անհրաժեշտ եւ օգտակար փոփոխութիւններ իրականացնել, իսկ բառերու անզգոյշ օգտագործման պարագային, պառակտում, ճգնաժամ եւ վայրագութիւններու խթանում:

Հայաստանի մէջ վերջին տարիներուն մենք ականատես եղանք այդպիսի սխալ հռետորաբանութիւններու հետեւանքներուն, հակառակ որ անոնք անխուսափելիորէն տեղի պիտի ունենային աւելի առարկայական պատճառներու բերումով: Թշնամին պատրաստուած էր տասնամեակներէ ի վեր այդ օրուան եւ կը սպասէր առիթի մը: Այդ առիթը եղաւ երբ վարչապետը Ստեփանակերտի մէջ յայտարարեց՝ “Արցախը Հայաստան է եւ վերջ”:

Սահմանազատման եւ սահմանագծման աշխատանքները մեկնարկը տուին խորհրդարանական ընդդիմութեան, իշխանութիւնը տապալելու ապարդիւն փորձերէն ետք, դիմելու վերջին հնարքին: Եկեղեցին դարձաւ ընդդիմութեան մաս եւ Բագրատ Սրբազանը անոր ներկայացուցիչը եւ անհնազանդութեան գործողութիւններու եւ հրապարակալին ելոյթներու առաջնորդը: Պետք չկայ անդրադառնալու սրբազանին արտայայտած շատ բառերու անստեղծութեան, անոնք հասկնալիորէն անհրաժեշտ են գուցէ ամբոյնները գրաւելու, սակայն կարելի չէ չարձագանգել այն սխալ եւ վտանգաւոր լոզունգներուն մասին,



որոնք ծանր հետեւանքներ կրնան ունենալ երկրին որդեգրած նոր քաղաքականութեան վրայ ու խափանել անոր բարեյաջող ընթացքը: Այդ լոզունգներէն են երկուքը. “ Ոսկեպարից Ստեփանակերտ” եւ “ Սահմանը այնտեղ է ուր հայ զինուորը կանգնած է”, որ մեր այլ պատմական լոզունգի մը (սահմանք քաջաց գէնն իւրեանց) նորամոյժ տարբերակն է:

Այդ երկու լոզունգներուն օգտագործումը կը մատնէ սրբազանին բացարձակ անտեղեակութիւնը ոչ միայն քաղաքական գիտութեան նուրբ արուեստին, այլ նաեւ համաշխարհային պատմութեան հոլովոյթներուն:

Մարդկութեան վերջին չոր հազարամեակներու պատմութիւնը, գրեթէ միանշանակ, կայսրութիւններու պատմութիւնն է, սկսած Աքքատական, Սումերական, Պարսկական, Հռովմէական կայսրութիւններէն, մինչեւ Փորթուկալական, Ֆրանսական եւ Անգլիական կայսրութիւնները: Անոնց մէջ չկան տարածքներու վերջնական, ամրագրուած, սահմանազատուած եւ սահմանագծուած սահմաններ: Անոնք յարափոփոխ էին ու յարաբերակցած կայսրութեանց տուեալ պահին ունեցած ուժէն, ուրիշ ճակատներու վրայ արշաւանքներէն, ներքին խլրտումներէն, բնական աղետներէն եւլն., նաեւ սահմաններուն կեդրոնէն հեռաւորութեանց պատճառով: Ընդհանրապէս այդ հեռաւոր տարածքներուն վրայ ապրող ժողովուրդները սահմանակից ըլլալով հարեւան կայսրութեանց, տեսաբար զոհ կ'երթային ասպատակումներու եւ ջարդերու: Դասական իմաստով կայսրութիւններու աւարտը կը հաղիսանայ համաշխարհային երկրորդ պատերազմի վերջը: Անգլիական, Ֆրանսական եւ Իտալական կայսրութիւնները փլուզուելէ ետք, զաղութները տիրացան իրենց անկախութեան: Աշխարհը ունեցաւ երկու գերպետութիւններ, Ամերիկայի Միացեալ Նահանգները եւ Սովետական Միութիւնը: Երկրորդին դէմ աշխարհը պաշտպանելու համար, Ամերիկան յանձն առաւ ազատ աշխարհը առնելու իր պաշտպանութեան տակ, Մարշալ ծրագրով մասնաւորաբար Եւրոպայի իր դաշնակիցները եւ նոյնիսկ արիւնաքամ Գերմանիան տնտեսապէս վերականգնեցնելու, որպէս պատուար Սովետական յառաջխաղացման: 1989 ին, Պերլինի պատի փլուզմամբ, Սովետական Միութիւնը պիտի փլուզուէր: Աշխարհը պիտի դառնար միաբերեւո ռ թեւակոյիւր պատմութեան մէջ աննախընթաց խաղաղ դարաշրջան մը: Ամերիկան յանձն առած էր ոստիկանի դերը ապահովելով աշխարհի բոլոր երկիրներու անկախութիւնը, ինքնիշխանութիւնը պետական սահմաններու անձեռնմխելիութիւնը: Աւելին՝ համաշխարհային ծովային եւ ցամաքային ուղիները այլեւս ապահով էին թէ՛ դաշնակիցներուն թէ՛ հակառակ ճամբարի պետութեանց համար: Մարդկութիւնը առաջին անգամ ըլլալով աննախադէպ բարեկեցութեան պիտի հասներ համեմատած ամբողջ պատմութեան ընթացքին: Ամերիկեան բանակը եւ մանաւանդ անոր նաւատորմիդը որու հզորութիւնը կը գերազանցէ աշխարհի միւս բոլոր պետութիւններու նաւատորմերը միասին հաշուած, երաշխաւորը պիտի ըլլար բոլոր երկիրներու ապահովութեան եւ տարածքային ամբողջականութեան, ներառեալ ծովերէն մեկուսացուած եւ զուրկ պետութիւններուն: Ամերիկայի միջամտութիւնը Վիեթնամեան պատերազմին առաւելաբար դաշնակիցներուն եւ փոքր երկիրներուն իր պատրաստակամութիւնը ցուցադրելու համար էր: Այս իրականութիւնը հիմնաւորելու համար թերեւս Իսրայէլի պարագան լաւագոյն փաստն է: Հակառակ անոր ազդու լոպիին եւ նիւթական հզօրութեան, 1967 ին արաբ-իսրայէլեան պատերազմին անոր յաղթանակին իբր արդիւնք Սուրիական Կոլանի բարձունքներուն (1500 քառ. քմ.), Պաղեստինեան Արեւմտեան ափին (5860 քառ.քմ.) եւ Կազայի հատուածին (365 քառ.քմ.) գրաման, առ այսօր անոնք պաշտօնապէս չեն ճանչցուիր իբր Իսրայէլեան տարածքներ եւ չեն ներառուիր երկրին ընդհանուր տարածքին մաս: Իսրայէլի մակերեսը 22145 քառակուսի քիլոմէթր է առանց այդ երեք գրաւուած տարածքներուն:

Ամերիկայի այս քաղաքականութիւնը, երկիրներու տարածքային ամբողջականութեան, աշխարհակարգի եւ ծովային եւ ցամաքային ճանապարհներու ապահովութեան



հովանաւորութիւնը լաւագոյն եւ միակ երաշխիքն է երկիրներու սահմաններու անձեռմխելիութեան, ազատ տնտեսական մրցակցութեան, բարեկեցութեան եւ զարգացման: Լեռներու խառնարանին խուլ անկիւնի մը մէջ, հեռաւոր հիւսիսային բեւեռին մօտ, ծովային ուղիներէն հեռու, անհասանելի անապատներու խորքը, միեւնոյնն է. մեզի հասանելի են աշխարհի ամէն կողմերու բարիքները: Այդ երաշխաւորութեան բացակայութեան պարագային, աշխարհը կը վերածուի անտառի ու կը տնօրինուի ատոր օրէնքներով, ուր պատերազմները դադար պիտի չունենան, Եւրոպան պիտի վերադառնայ պատերազմներու օրրանի ինչպէս էր դարեր շարունակ իսկ փոքր պետութիւնները ընդհանրապէս ջնջուին քարտէզէն:

Հայաստանը առանց այդ աշխարհակարգի ընձեռած ապահովութեան շատ անյոյս վիճակի կրնայ մատնուիլ եւ գոյութենական ստոյգ վտանգի առջեւ գտնուիլ: Այս իրականութեան գիտակցումէն ետք, աւելի հասկնալի կը դառնայ Սրբազանի արտասանած եւ վերելք յիշուած լոզունգներու ոչ միայն անիմաստ, այլեւ խիստ վտանգաւոր ըլլալը: Ատոնք մեր թշնամիներուն համար շահարկման առիթ պիտի ըլլան ընդդէմ մեր պետութեան, որ պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով օրինական սահմաններով ճանչցուած պետութիւն է այլեւս:

Իսկ հիմա, մեզի օդի եւ ջրի պէս խաղաղութիւն պէտք է եւ ոչ պատերազմ:

ԳՐԱԿԱՆ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ

ՓՈՒՆՋ ՍԸ ՔԵՐԹՈՒԱԾՆԵՐ՝ ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՍՃԵԱՆԷ



Ո՞՛Վ ԿԱՐԴԱՅ ՊԻՏԻ

Քանի գարուններ են սահեր, անցեր,
Բայց ամէն գարնան դեռ կը սքանչանամ
Պայթիւնով հզօր նոր բողբոջներու,
Զարթօնքով հըրաշք նո՛ր-նո՛ր ծիլերու,
Որոնք հին կոճղին յանկարծ կեանք կու տան,
Կը գարունանայ ծառը ալեհեր...

Քանի ծաղիկներ դիւթանքն են փոեր



Հայեացքիս դիմաց՝ բոյրեր ու թոյրեր,
Բայց ամէն ծաղիկ իր հրաշք հմայքով
Զիս կ'ատինքնէ լոյս արբեցումով:
Հողի ընդերքէն ծլած ու ծաղկած
'Նոր խօսք մ'ունի ան գոր դեռ պիտ' կարդամ...

Եւ կեանք մը ամբողջ կը բաւէ՞ արդեօք
Կարդալու խորհուրդն բնութեան համակ,
Որ մեզ հետ խօսի անխօս բարբառով,
Բիւր թռչուններու գուարթ դայլայլով,
Առուի կարկաչով, ծառի սօսափով,
Երկնի աստղերու բիւր շշուկներով...
Ո՞վ կարդայ պիտի գաղտնիքը անոր:
20/4/2019

.....

ԵՍ ՄԻՐՆՅԻ

Ես սիրեցի պահն այն հրեղէն
Երբ սրտիդ զարկն թրթիռ դառնայ,
Հոգիդ սլանայ անհունն ի վեր,
Աճի, շատնայ... աշխարհն համակ,
Տիեզերքն ամբողջ գրկելու չափ...

Երբ թեւերդ լայն տարածես
Եւ քեզ թուի որ դուն կրնաս
Երկնի աստղերն ափիդ բռնել,
Լուսաճառագ կեռոն դառնալ,
Աշխարհն ամբողջ լուսաւորել...

Երբ սրտիդ դողն կլանէ հոգիդ
Միրոյ վարար հրավառութեամբ,
Ինչպէս շանթը ճեղքէ երկինքն
Հրացայտ լեզուակ կայծակնահար...

Յայնժամ կարծես համակ կեանքդ
Կը դառնայ մէկ լոյս ակնթարթ
Եւ կանգ կ'առնէ ժամանակը
Ակնթարթին մէջ լուսացայտ...
12/5/2017

.....

ՄԵՐՄՆԱՑԱՆԻՆ ՆՄԱՆ

Մերմնացանին նման բարի,
Ես իմ հունտերը ցանեցի՝
Ակօսներուն սրտի, մտքի՝



Բառ հունտերս, որոնք յուրթի
Ծիլեր տուին արտերուն մէջ
Հոգիներուն բիր լուսաշէն...

Բո՛ւտ-բո՛ւտ զանոնք ես շաղ տուի
Գորովով ջի՛նջ, լուսաթաթա՛ւ
Որ ցորեանի հասկեր դառնան,
Ատոք հասկեր լո՛յս եւ ոսկի՛ ...

Հեռաստաններն էին իմ դէմ,
Հայոց աշխարհն էր հնաւանդ,
Հերկերով վէհ ու փառապանծ,
Ես լոկ յետի՛ն մշակ նսեմ:

Երկի՛ր իմ բորբ, լուսահմայ,
Ճաճանջներուդ արեւահեղ
Եւ բերքերուդ հմայագեղ
Թէ կարենամ ընծայ բերել
Նշո՛յլ մը լոյս, հա՛սկ մը ցորեն,
Խղճիս պարտքը ես ի կատար,
Գոհ կը մեկնիմ այս աշխարհէն...
19/5/2016

.....

ՅԱՆԴԳՆՈՒԹԻՒՆ

Յանդգնութի՛ւն,
Ոգեղէն թուր մը Կեծակի
Նախնեաց շունչով ինծի հասար,
Մատղաշ հոգւոյս մէջ բոյն դրիր,
Նոր ընձիւղներ տուիր դալար...

Յանդգնութի՛ւն,
Հրեղէն թելեր ինծի տուիր
Որ չմնամ ես գետնամած,
Խոյանամ վեր որպէս արծիւ,
Բարձունքներուն ես սիրահար...

Յանդգնութի՛ւն,
Արեանս եռքն եղար կայտառ,
Որ չհոսի ան յուլօրէն,
Այլ բորբոքի հրաբուխի պէս,
Պոռթկայ, ժայթքէ հրաշէկ լաւա...

Յանդգնութի՛ւն,
Դուն սնուցիր ինծի ոգի
Ըմբոստութեան մը սրբազան,



Որ լեռներէն մեր հրաբխի
Ընդդէմ ամէն ստրկութեան...

Յանդգնութի՛ւն,
Յեղին ձայնը դարձար մաքուր,
Հայոց հողին կանչը արդար,
Մասնայ Դաւթի գարկը հատու
Յանուն հողին մեր սրբազան...

Մուրբ պատուիրան մը դարձար դուն՝
Գլուխ չծռել թշնամիին,
Չյանձնուիլ այլ պայքարիլ
Խրամատին մէջ հազարանուն:

Քեզմով վառուած դեռ պիտի գան
Մերունդներ վեհ արմենական,
Քեզմով ի կեանք պիտի կոչեն
Մեր մեծ երազն ու տեսլական:

21/5/2016

.....

ՄԻ ԲՈՒՌ ՅՈՐՇԵՆ

Մէ՛ր քաղեցի ծաղիկներէն, խոտէն խոնարհ, դաշտ ու անդէն,
Մայրամուտի վառ ծիրանէն ու հրդեհուող հորիզոնէն,
Գգուանք մը լո՛յս՝ օրո՛ր-շորո՛ր լուսաթրթիտ տերեւներէն,
Մթան մէջ լոյս պսպղացնող ջահավառեալ աստղիկներէն...

Շաղախեցի զանոնք հոգւոյս ու իմ սրտի տաք քուրային,
Բոցկլտացին լոյս հրդեհներ արարումին իմ ցնձագին,
Ծնունդ տուին վառ տողերու մեղեդիին հըրաշածին,
Որ երգեցի սիրով խնդուն ու հոգիով երախտագին...

Եւ չեմ գիտեր թէ ո՞վ յուշեց բառ ու խօսքերն Մեսրոպաւանդ,
Բառարանի ո՞ր էջերէն կա՛թ-կա՛թ եկան իմ գրչիս տակ,
Հաւաքեցի սիրտով խոնարհ ու շարեցի ինձ ընծայուածն՝
Հայրենական մի բուռ ցորեն՝ նօթի սրտիս լուսածարաւ...

21/4/2019

.....

ԱՊՐՈՒՄՆԵՐ ԿԱՆ



Ապրումներ կան որ մնացին
 Մատուռին մէջ սիրտիս անհուն,
 Զերթ սիրոյ երգ, սաղմոս մը սուրբ
 Հնչեցին հոն աղօթաբոյր,
 Կամարին տակ այն սիրաբոյր,
 Դարձան խորհուրդ անքննելի...
 Իմ մումերս հոն վառեցի,
 Սիրտի երգ մը մրմնջելով,
 Բոցկլտացին բոցեր լուսոյ,
 Վառ կարօտի ու ջերմ սիրոյ,
 Մատուռն փոքրիկ կարծես մեծցաւ,
 Դարձաւ տաճար աղօթալոյս...

12/5/2017

.....

ՄՐՏԻՍ ՏՐՈՓԻԻՆՆ

Լռութեան մէջ համատարած
 Սրտիս տրոփիւնն է պատարագ,
 Որ մերթ հանդարտ կարծես խոկայ
 Իմաստնացած, լրջահայեաց,
 Մերթ տենդավառ հուրհրատի,
 Գիժ պարման մը կարծես ըլլայ,
 Մոռնայ տարիք ու ժամանակ,
 Կը բոցկլտայ կայծեր հրացայտ...
 Մերթ կը քաշուի պատեանին մէջ,
 Զմոռն քունով ննջէ խաղաղ,
 Մերթ բաբախէ զարնանավառ,
 Նոր աւիշով յորդի ափէն...
 Մերթ անչափ հեզ նայի մարդկանց,
 Անչափ բարի ու հանդարտիկ,
 Մերթ բորբոքի ու զայրանայ,
 Կրակ տեղայ անիրաւին...
 Եղանակներն իր մէջ առած,
 Կեանքի ցոլքն է անապական,
 Տրոփիւնն իր ինձ յուշարար
 Որ ինքն է աչքն ամենատես,
 Որ ուղեցոյց փարոս դառնայ
 Սրբիկներուն բիւր, հողմածեծ...

15/5/2017

.....

ԿԱՆԳՆԵՐ ԵՍ ՎԵՀ



Կանգներ ես վեհ, կանգներ հպարտ, ա՛զգ իմ հայոց,
Ցաւդ ես ծամեր ու ամբացեր դար ու դարեր,
Տառապանքով ես թրծուեր, հզօրացեր,
Բայց մընացեր քնքն՝ ւշ ու հե՛զ, ա՛զգ իմ հայոց...

Քարերդ շատ, հողդ մի բուռ, չես բրտացեր,
Քարերով լոկ խաչքար կերտեր ես նրբագեղ,
Հոգի դրեր քանդակներուդ մէջ քարեղէն
Ու ոգեղէն, լուսեղէն են անոնք դարձեր...

Քար աշխարհի քարէ խղճին քա՛րդ է լացեր
Եւ վանքերէդ աղօթք յղեր առ Երկնայինն,
Բի՛ւր բի՛ւր մեղաց քաւութիւն է ան միշտ հայցեր,
Մոռցած վերքերդ խոշտանգուածի, չարչարուածի...

Լեռնաշխարհիդ մէջ քարեղէ՛ն, ապառաժեա՛յ,
Սիրտդ փխրո՛ւն ու զգայո՛ւն է յար մընացեր,
Ու տրոփեր է բիւր ցաւերուն համար մարդկանց,
Մոռնալով միշտ սեփական ցաւն իր կարեւեր...

Ու խի՛ղճդ միշտ արթուն, վճիտ է մընացեր
Քա՛ր խիղճերու, քա՛ր սիրտերու աշխարհիս մէջ
Եւ ներեր է անքէ՛ն սիրտով, ազնւօրէ՛ն,
Քարերո՛ւդ մէջ գութ, կարեկցանք ես ճառագեր:

Բայց ծառացե՛ր, աշտարակուե՛ր ես քաջաբար,
Երբ չարանենգ թշնամին է սպառնացեր
Քու հողիդ սուրբ, բառ ու բանիդ ծիրանեփայլ,
Ապառաժուեր խրոխտաբար սեզ սարիդ պէս...
3/5/2019

.....

ՕՐՈՒԱՆ ԱՂՕԹՔՍ

Տե՛ր, մի թողուր որ մոլորի ազգս անգին
Լոզունգներուն մէջ ստայօդ, խաբեպատիր,
Դիմակներուն մէջ կեղծիքի, դիրքի, շահի,
Ամբոխին մէջ խելակորոյս գտնէ ուղին:

Շատ ենք տեսեր ցաւ, տառապանք, վիշտ ու կսկիծ,
Թաց են դեռ մեր արցունքները սգաւորի,
Արին կաթի մեր սիրտերէն վշտահարեալ,
Կը մղկտան մեր հոգիները ցաւատանջ:

Գէթ այս անգամ, գթա՛ ազգիս, Տե՛ր Ողորմած,
Լոյսդ հեղու մատախտուղին մէջ մթամած,




Կորչի մեզը, բացուին աչքերն ու միտքերն ալ,
Ազգս քալէ ճանապարհէն արեւացեալ:

Շատ ենք շեղեր պատուիրանէդ քու երկնային,
Գայթեր յանուն իւեղճ արծաթին քստմնելի,
Բայց ՀԱՅԸ ես Դուն որ միշտ ներէ իր գաւակին,
Սրտին սեղմէ, գայն պաշտպանէ գորովագին:

Պահին այս ծանր, լսէ ձայնը հառաչանքիս,
Թող փշրուին պատնէշները նենգին, չարին,
Սիրոյ լոյսով ու հաւատքով ԲԱՐԻՆ ծաղկի
Ու երկիրս տանի շքեղ լուսաբացին:

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

ԸՆԹԵՐՑՅԵԼՈՎ ՎԱՐԴԱՆ ԹԱՇՃԵԱՆԻ «ՆԱՄԱԿԱՆԻ Յ. ԳԵՂԱՐԴԻ ՀԵՏ» ԳԻՐՔԸ



Վարդան Թաշճեան՝ կրթական վաստակաւոր մշակն ու արուեստագէտը, տնօրէնն ու մանկավարժը, գրողն ու գիրի մշակը: Մէկը՝ այն «ԱՆՁԻՆՔ ՆՈՒԻՐԵԱԼՔ» կոչուած սակաւաթիւ անձնաւորութիւններէն, որոնք ամբողջ կեանք մը իմաստաւորած են ու կը շարունակեն իմաստաւորել նուիրուելով հայ դպրոցին, հայ գիր ու դպրութեան, գեղեցիկի արարման՝ գոյնով ու զիծով, ազնիւ վարքով ու արարքով:

Բախտաւորներէն եղած էմ գայն ճանչնալու Կիպրոս ոտք դրած օրէս, դարձած ենք բարեկամներ, որոնք կը մնան սրտամօտ ու անդաւաճան, որքան ալ տարիներն ու հանգամանքները իրենց յարափոփոխ պայմանները պարտադրեն մեզի:

Վերջերս, 4 Մարտ 2024-ին, իր գեղեցիկ ընծայագիրով ստացայ իր նոր գիրքը՝ «ՆԱՄԱԿԱՆԻ Յ. ԳԵՂԱՐԴԻ ՀԵՏ» վերտառութեամբ, հրատարակուած 2023-ին, Համազգայինի «Վահէ Սեթեան» տպարանին կողմէ ի Պէյրութ եւ խմբագրութեամբ Եղիա Գայայեանի:

Նամակագրութիւնը գրականութեան իրայատուկ սեռ է, ուր նամակագիրները ամենայն ակեղծութեամբ եւ անմիջականութեամբ կ'արտայայտեն իրենց առօրեայ յոյզերն ու խոռվքները, միտքերն ու ապրումները՝ հոգիէ հոգի ծիածանումով, առանց այսպէս ըսած «գրականութիւն» ընելու երբեմն արուեստակեալ ճիգին: Անսեթեւեթ եւ ինքնաբոլիս արտայայտչականութեամբ: Մաքրամաքուր արուեստով: Այս պարագային, նամակները երկուստեք կը դառնան նաեւ օգտաշատ եւ հետաքրքրական տեղեկութիւններ պարունակող



սկզբնաղբիւրներ կամ տեսակ մը արխիւ՝ Կիպրոսի, Լիբանանի հայագաղութներուն մասին: Անոնց կրթական-մշակութային կեանքի մասին: Անոնց հայապահպանումի եւ հայակերտումի անխոնջ պայքարի մասին: Լիբանանի քաղաքացիական կոիւներու թոհուրոհին մասին, սփիւռքահայ կեանքի վերիվայրումներուն մասին, որոնց մէջ կ'առկայծին միշտ սերը, նուիրումը հայ մշակոյթին, հայ գիր ու դպրութեան հանդէպ: Վարդան Թաշճեան եւ Յարութիւն Գեղարդ՝ երկու նուիրեալ մշակները Մեսրոպեան աւանդին, արհամարհելով ամէն դժուարութիւն եւ խոչընդոտ, սփիւռքահայ կեանքի տարականոն պայմանները, անոր տազնապներն ու տուայտանքները, ոյժ կը գտնեն իրենց մէջ ստեղծագործելու, թիավարելու ազգային նահանջականութեան հոսանքն ի վեր, նշոյլ մը լոյս սփռելու հայ կեանքի երբեմն մթամած հորիզոններուն, յոյս ու հաւատք ներշնչելու տարագիր հոգիներուն...:

Յարութիւն Գեղարդ՝ Պէյրութի ֆրանսական Բժշկական Համալսարանէն վկայեալ վիրաբոյժ-ատամնաբոյժը, ամէն ճիգ ի գործ կը դնէ երեսուն տարի անընդմէջ հրատարակելու «ԲժԻՇԿ» ամսագիրը, որմէ կը յիշեմ օրինակ մըն ալ կ'առաքուէր մեր տունը, ուր յափշտակութեամբ կը կարդայինք առողջապահական այն կարեւոր գիտելիքներուն մասին, որոնք կային անոր էջերուն մէջ: Ան նաեւ պատասխանատուներէն է ԲԱԳԻՆ գրական ամսագրին, անոր հիմնադիրն ու արտօնատերը, ՀՄԸՄ-ի յանձնառու նուիրեալներէն է, կու տայ բանախօսութիւններ ազգային տարբեր առիթներով, կը դասախօսէ, կը գրէ ու կը հրատարակէ յօդուածներ, առակներ, պատմուածքներ, բանաստեղծութիւններ, լոյսին կ'ընծայէ՝ իր աւելի քան տասը երկերու հատորները, իր կեանքին առանցքը դարձնելով ազգանուէր մատուցումը...Դադար չունի իր ազգային եռանդն ու կորովը, նոյնիսկ՝ Լիբանանի քաղաքացիական ամէնէն թեժ օրերուն, մահափորձի ենթարկուելէ եւ ստոյգ մահուան հետ առերեսուելէ ետք ալ: Ան կարծես կրկնօրինակն է Վարդան Թաշճեանի, որ նոյն «ԽԵՆԹ»ն է, ինչպէս տեղ մը կը գրէ Գեղարդ Վարդանին հասցեագրած իր նամակին մէջ, ուր շնորհաւորելով իր անուանակոչութիւնը՝ կ'արձանագրէ. « Անունի զուգադիպութի՞ւն մը...Ստոյգ է սակայն, որ Կարմիր Վարդանէն մինչեւ Բաֆֆիի Վարդանը «Սրբազան խենթ»երը առաջնորդեցին այս ազգը դէպի յաղթանակ»: Եւ կ'աւելցնէ. «Չեմ զարմանար, սիրելիս, որ այդքան բեռ դնեն ուսերուդ: Բազմաշնորհ ես, հաւատաւոր եւ...համեստ: Անձնական ու հանրային կեանքերդ այնքան միաձուլուած են իրարու եւ այնքան նուիրում կը ցուցաբերես երկութիւն ալ հանդէպ որ առանձինն չես կրնար ապրիլ մէկով: Եւ ձիւնագնդակը կը ծաւալի մեծնալով, ուռճանալով միշտ»:

Յայտնապէս նոյն խմորէն են Գեղարդ եւ Վարդան Թաշճեան, Ս. Մեսրոպի լոյսի ճամբուն վրայ պատարագուող անվեղար պատարագիչները, որոնք միշտ ալ հաւատացին հայ գիրի ու գիրքի հրաշագործութեան, ազգային ոգիի ճառագայթումին: Հաւատացին վսեմին ու գեղեցիկին ու նուիրաբերեցին իրենց կեանքը յանուն անոնց հրաշագաղութիւն հայ կեանքէն ներս:

Կարելի չէ հիացումով չյիշատակել Վարդանի ձեռագիր նամակներուն սքանչելի գեղագրութիւնը, որ կ'առինքնէ ընթերցողը անմիջապէս: Անոնցմէ նմուշներ



հրատարակուած են գիրքի էջերուն վրայ: Գիրը նաեւ մարդն է, ինչպէտ ճիշդ է որ ոճը մարդն է: Վարդան Թաշճեանի գեղատիպ գիրը ցոլանքն է իր էութեան՝ ազնիւ, պարզ, ընկերասէր, ազգասէր վարքին, հարուստ ներաշխարհին, զոր վայելելու բախտն եւ ունեցած տարիներ ու տասնամեակներ շարունակ:


Խօսելով ՆԱՄԱԿԱՆԻ-ի հատորին նամակագրութեան ոճին մասին, պիտի խոստովանիմ որ այդ ոճը բանաստեղծական ինքնատիպ պատկերներով է յագեցած, հարուստ բառամթերքով, բառերու եւ ասոյթներու ճաշակաւոր ու ճշգրիտ ընտրութեամբ, տակաւին՝ սրամտութեամբ ու զուարթախոհութեամբ ալ, ինչ որ ընթերցումը կը դարձնէ հոգեմտաւոր իսկական վայելք մը: Մեարոպեան գինիի արբեցում մը: Իսկ մեր յիշողութեան պաստառներէն կը տողանցեն այն գեղեցիկ ու քաղցրայուշ օրերը Լիբանանի, երբ կեանքը եռուն էր ազգային կեանքով, երբ դեռ նկատառելի թիւ մը կը կազմէին սրբազան խենթերը...հոս՝ Կիպրոսի մէջ ալ: Աւա՛ղ փառացս անցաւորի:

Վարձքդ կատա՛ր, սիրելի Վարդան, որ ընկերոջ հանդէպ տաճածդ իրաւ հաւատարմութեամբ՝ լոյսին ես ընծայեր Գեղարդին հետ ձեր տարիներու վրայ երկարող նամակագրութիւնը, որպէս պսակ մ'անթառամ իր խնկելի յիշատակին: Նմանապէս՝ որպէս նոր յաւելում մը հայ գիր ու դպրութեան նաեւ յետ-Եղեռնեան հայոց պատմութեան արժէքներուն վրայ: Գա՛նձ անկշռելի: Ոյժդ եւ կորովդ մնան անսպառ:

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆԻ ԳՈՒՆԱՇԽԱՐՀԸ

Ընթերցելով Երանի գրքերը:



Ինձ շատ յարգելի բանաստեղծուհի, լրագրող, խմբագրապետ Երան Գույումճեանից ստացել եմ իր գրական գործերի հունձքը՝ «Լուսէ անուրջներ», «Հոգւոյս հեւքին հետ», «Հայերգութիւն», «Քառեակներ» գրքերը եւ էլեկտրոնային տարբերակով «Ծիրանի լոյս»-ը: Շատ եմ ափսոսում, որ «Ծիրանի լոյս» գրքի երեսնեան շնորհանդէսին չեմ մասնակցել եւ Երանին տեսնելու հաճոյքը չեմ ունեցել:

Յարգելոք տիկին Երան Գույումճեանին երկար տարիներ ճանաչում եմ եւ Կիպրոսի իր խմբագրած «Ազատ Խօսք» թերթից, որին երբեմն հաճոյքով թղթակցում եմ, եւ «Ֆէյսբուք»-ի էջերից, ուր տիկին Երանը յաճախ իր հրաշալի բանաստեղծութիւններն ու քառեակներն է գետեղում: Ասել է՝ ծանօթ, մտերիմ մարդու մասին եմ հիմա իմ խօսքը գրում: Գրում եմ հաճութեամբ, սիրով,



յարգելոր այս տիկնոջ հանդէպ ունեցած ակնածանքով:

Երան Գույումճեանը անհուն սիրով կապուած է Մայր Հայրենիքի հետ. նրա խմբագրած թերթում, նրա գրած առաջաբաններում, առանձին յոդուածներում ու նաև բանաստեղծութիւններում շարունակաբար արծարծում է Հայրենիքի թեման: Այս պահուածքը Հայրենիքից հեռու ապրող, բայց արեան ու աւիշի կապուածութեամբ հայրենիքի ներկայով ապրող Երան Գույումճեանին զարդարող պսակ է:

**«Հոգւոյդ մէջ պահէ՛ ցոլքն Արարատի, ու՛ ը ալ որ երթաս,
Սրտիդ մէջ պահէ՛ լեզուդ մայրենի, երկնին տակ օտար,
Եւ հայեացքդ վառ՝ հողին հայրենի, քու միակ հոգետան,
Որ չմոլորի՛ ս եւ չկորսնցնէ՛ ս հոգիդ հայկական»:**

Երանն ինչ գրում է, սրտով է գրում, սրտի թելադրանքով է գրում, դրանից է, որ սիրելի է նրա գիրը, ինչպէս սիրելի է սրտով ասուած ամէն խօսքը: Նուրբ է ու զգոյշ նրա վերաբերմունքն իր ամէն բանի հանդէպ, որ պիտի տեղաւորի իր նախադասութեան մէջ:

**«Բառը դիւթանք է անքննելի,
Հոգիները կապող կամար...
Բառը սփռականք է սիրտէ սիրտ,
Բառը՝ հրաշք մխիթարիչ...»:**

Ահա այս բանի հանդէպ է Երանի խոնարհումն ու ակնածանքը:

Երանը խոստովանում է, որ «Գրիչովս՝ միշտ ճշմարտախոյզ //Ես ուզեցի ջահեր վառել...»: Մոսկ նուիրո՞ւմ է, բանաստեղծուհու իր կոչումին, երկիւղածութիւն է բծախնդրութիւն: Սիրելի է նրա այդ երկիւղածութիւնը՝ կարծես թէ գրելիս տեսնում է ընթերցողի աչքերը, հայեացքը: Ժպտաց իր ընթերցողը, երբ կարդաց իր յոյզերն ու ապրումները, մի պահ դադար տուն է՝ վերջիշէլու իր իր իսկ ապրումները, որոնք ունեցել է ու չի արտայայտուել, բանաստեղծական ձեւի մէջ չի դրել ու հիմա կարդաց այն, ինչ պիտի ասեր ինքը, բայց ասում է Երանը: Ասում է իր քնքոյշ վերաբերմունքով, իր զգոյշ մօտեցումով:

**«Ես ուզեցի մութը ցրել,
Լոյսեր վառել սիրտերնէդ ներս...
Գրիչովս՝ ջերմ սիրազեղ,
Ես ուզեցի սէր սերմանել
Միրտերէն ներս՝ մարած, անսէր,
Որ կառչէին կեանքին լուսէ...»:**

Յիշեցի բանաստեղծ Ռազմիկ Դաւոյեանի մի երկու տողը.

**«Զգոյշ շօշափիր պատերը բանաստեղծութեան՝
Քո մատների տակ սիրտ է բարբախում»:**

Հենց այդ զգուշութեամբ է Երանն իր պոեզիայով արշալոյսների ու գարունների Տէր դառնում, դրանք սեղմում իր գրկի մէջ տաք, եւ.

**«Ես արբեցայ անունց տենդով,
Զերթ զինիով՝ յորդ, կենսատողջ
Եւ օրհնեցի կեանքն ու արեւ
Երախտիքով սիրահեղեղ...»:**

Երանն իր պոեզիայով թարգմանն է առնում մեր յոյզերի եւ մեր ապրումների, մեր պատանեկան ու ջահել օրերերի ռոշնական սիրոյ ուղեկիցն է դառնում՝ մեր նման ապրումներին երանի տալով.

**«Երանի անոր, ով կը խորզգայ
Մէրը անանուն եւ լուսաթրթիռ,
Որ կը ծիածանուի՝ երանգ առ երանգ,
Հոգիէ-հոգի եւ սիրտէ ի սիրտ... »:**



Երանի գիրը բարոյախօսութիւն չէ, եւ Երանն ինքը իրեն չի վերապահում խրատողի կերպար: Նրա գիրը խորքային է, ապրուած, պատասխանատուութեան բեռը ուսած: Այդ պատասխանատուութիւնն առաջին հերթին իր Բառի հանդէպ է, Բառ, որ դիւրօրէն է եւ դառնում է նշխար ու հաց, Բառ, որ լուսէ մեղեդի է, որ հնչում է աղօթքի պէս եւ դառնում է օրհներգութիւն: Երանի ինքնութիւնը դարձել է «խոհի եւ խորհրդածութեան գրգիռ»: Յիշողութեան մասունքներից է գոյացել այդ ինքնութիւնը, որ պոետուհուն տրամադրել է ապրում եւ յոյզ, երեւակայութեան թռիչք ու խոյանք: Երանը երջանկութեան իւրովի բանաձեւումն ունի, որ ինքն է ստեղծել իր համար, իր երջանկութիւնը հաւաքել է «Արեւներէն՝ շող առ շող», բիւր աստղերից է քաղել՝ ցոլք առ ցոլք, հոգիներից է լոյսն առել՝ կաթիլ, կաթիլ եւ:

«Բառ ու բանէն հեւքդ առի հնչիւն-հնչիւն»:

Երան Գույումճեանի քառեակները, որ առանձին գրքով են հրատարակուել, հեղինակի բնորոշմամբ, ծնունդ են առել որպէս «խոհի եւ յոյզի, մտքի եւ պատկերի միաձուլումով, խտացած եւ ինքնաբոլիս մղումներով»:

Դժուար ժանր է քառեակը՝ ամփոփ տողերով պիտի կարողանալ մտքեր արտայայտել, որ խորհելու տրամադրութիւնն առաջ բերեն ընթերցողի մօտ, նրան տրամադրեն կեանքի իր քայլերն ինչ-որ չափով համադրել քառեակում արտայայտուած յորդորների հանգոյն, մանաւանդ, երբ դրանք ընդունելի են իր համար: Ահա այստեղ է բանաստեղծուհու յաղթանակը՝ շահել ընթերցողի համակրանքը, որ վերջինս ականջալուր լինի յորդորներին, ու ընդունելի համարի դրանք:

Պայման է, անշուշտ, որ յորդորողը ունենայ այն ասելու իրաւունքը՝ իր մաքուր ապրելակերպով, քաղաքացու իր խոհեմ կեցուածքով, նկատելի գործունէութեամբ և արդարօրէն վաստակած հեղինակութեամբ: Երան Գույումճեանն ունի՝ այդ իրաւունքը՝ այս պարագայում նրա քառեակները կեանքի, մարդու, սիրոյ և մարդկային փոխյարաբերութիւնների շուրջ ազնիւ ու պարկեշտ հայտուհու մտորումների բարձրաձայնումն են: Նաեւ պոեզիայի աշխարհում իր ուրոյն տեղը գտնելու համարձակ քայլ է՝ արդէն արդարացուած հարիւրաւոր քառեակներով ծանրաբեռ իր մուտքով: Երանի քառեակներն ընկալում են որպէս մաքուր կենսագրութիւն ունեցող բարեպաշտ ու ազնիւ տտիկնոջ իւրովի մի ընծայ իր ընթերցողին:

**«Գիրս սիրոյ համբոյր մըն է,
Կ'երթայ, դպչի ուրիշ սրտին,
Ձայն ջերմութեամբ կը պարուրէ,
Միտքը սրտին կը կամարէ...»:**

Քառեակները ծնունդ են պահի մէջ, ապրուած խոհերի արդիւնքում, եւ շարադրում են տուեալ պահին արժէքաւոր մտքերի բարձրաձայնումը դառնալով: Այսպէս են գրուել հեղինակի հարիւրաւոր քառեակները, որոնցում նկատել է մի գեղեցիկ բան՝ ո՛չ մի քառեակ, քառեակի ո՛չ մի միտք չի՝ կրկնում, ամէնքում՝ նոր խօսք, նոր ասելիք է:

Դարեր շարունակ կեանքի պարզ ճշմարտութիւնը՝ «Ուրիշին տուածը քոնն է», իմաստուն խրատ է մնում՝ մարդուն բարութեամբ, ազնիւ կեցուածքով զարդարելու համար: Ութ հարիւրից աւել տարիներ ի վեր Շոթա Ռուսթավելու յորդորը՝

**«Ինչ տուեցիր ուրիշին՝ քոնն է,
Ինչ թաքցրիր՝ կորաւ»**, նորովի է մեկնում Երան Գույումճեանը.

**«Ունեցածդ թէ՛ քե՛զ պահես,
Կը կծկուիս, կ'աղքատանաս,
Ուրիշներուն տալով միայն
Կ'ընդարձակի՛ ս, կը բազմանա՛ ս»:**



Երանի պոեզիայում շարունակաբար հնչող մի իւրօրինակ յորդոր կայ մարդուն տրուող բարոյական գիտակցութեան հրամայականի մասին, հրամայական, որ մարդուն պիտի տրամադրի իր միջի ԵՄ-ը փոխել ՄԵՆՔ-ի՝ դրանով իր միջից արմատախիլ անելով եսակենտրոն մղումները: Երանը, ով արդէն գրական աշխարհում վաստակի ծիրանին ունի իր ուսերին, իր ապրած կեանքի պարզ ու մաքուր օրերի վկայութեամբ կարող է հանգիստ ասել.

«Ճակատարա՛ց ես ապրեցայ՝

Հաւատարիմ միշտ ես ինձի...»:

Մի իւրօրինակ հանրագիտարան է Երանի յիշողութիւնների ալբոմ-օրագիրը:

«Յուշերս քաղեմ, ի մի հաւաքեմ

Շոտով ձմեռ է՝ չկորչին անհետ...»:

Երանի նոթերը հանդիպումներ են հայ մշակոյթի, գրականութեան, իրաւագիտութեան ասպարեզի նկատելի անձանց հետ, վերջիններիս արած նկատելի գործերի բնութագրումներ: Դրանք յիշեալ անձանց ձօնած աւելորդ գովեստներ չեն, այլ նրանց վաստակի, հեղինակութեան, միջավայրում իրենց արժանի տեղն ապահոված լինելու նկարագրութիւն են՝ արուած փորձառու լրագրողի, հրապարակախօսի սիրով ընթերցելի գրով: Այդ նոթերին պոետական շունչ է տրուել՝ անուանելով դրանք մրգեր աշնան, հիւթեր հաւաքած ու գանձեր խոհի եւ յոյզի:

...Միրելի Երան, երկար ապրիր ակնահաճոյ քո գունաշխարհում:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՊԱՊԻԿԵԱՆ

ԳՐՈՂ-ՀՐԱՊԱՐԱԿԱԽՕՍ

ՏՊԱԻՈՐՈՒԹԻՒՆ

ԶԱԻԷՆ ԳՐԻԳՈՐԵԱՆԻ «ՈՂԲԵՐԳ ԼԻԲԱՆԱՆԻ ԴԺՈՒԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ» ՀԱՏՈՐԸ



Քանի մը օրեր առաջ շնորհակալութեամբ ստացայ եւ խոր վիշտով ու ցասումով կարդացի վաղեմի բարեկամիս՝ յունահայ գաղութի վաստակաշատ անդամներէն, գրական, հասարակական, կրթական գործիչ եւ մամուլի անխոնջ սպասարկու Զաւէն Գրիգորեանի վերոյիշեալ հատորը, տպուած՝ Աթէնք, 2021 թուականին:

Երեսուն ողբերգներէ եւ աւարտին՝ չորս յուսալից երգերէ՝ (խաղաերգ, աղօթաերգ, մաղթերգ, օրհներգ) բաղկացած պոեման պէտք է ըսել որ գերմարդկային քաջութիւն կը պահանջէ թուղթին տալու, գիտակից զսպուածութեամբ մը՝ ջիղերը հանդարտ պահելու փորձով, ինչ որ ցուացումն է՝ իսկական դէպքեր, իրադարձութիւններ, պատահարներ կարծես ականատեսի վկայութիւն՝ հեղինակի հարազատ ու պատկերաւոր ոճով ընթերցողին հրամցնելու հմտութեան:



Լիբանանի քաղաքացիական ահաւոր պատերազմի սկզբնական տարիներու արհաւիրքն է այս գիրքը աղէխարշ, կսկծալի ու սարսռազդեցիկ քերթուածներու փունջով, գրեթէ նկարահանումի մը գործիքը ըլլար մեր օրերու «drone»ներու նման շրջագայող փողոցէ փողոց, թաղէ թաղ, տունէ տուն, մահասփիւռ ու քարուքանդ շէնքերու, փլատակներու վրայէն:

Այնքան թարմութիւն կայ տեսարաններու նկարագրութեան մէջ, որ մարդկային երեւակայութենէն դուրս ողբերգութիւն մըն է, որ կը քակուի կարդացողին առջեւ, այն աստիճան որ ալ հատորի վերջաւորութեան արցունք չի մնար կաթելու անոր էջերուն վրայ:

Մեծ Եղեռնի հայութեան պատուհասը, անդոհական օրերու դրուագները, փորձառութիւնները, տանջանքները, տառապալից վիճակները կարդացած ու բեմերէն լսած ենք տարիներով, յատկապէս Ապրիլ 24-ին զուգադիպող օրերուն ու հիմա, այդ սեւ, դժոխային թուականէն վաթսուն տարի ետք, հազիւ վերաշինած իր բոյնը ենթադրաբար դարաւոր թշնամիին սահմաններէն հեռու, ապահով ավերուն վրայ, գաղթական հայր եւ հիւրընկալ, ասպնջական լիբանանցին դժուար է հաւատալ որ դարձեալ ապրին սոսկական, մահասփիւռ, մղձաւանջային լաբիրինթոսը, արիւնը, աւերն ու աւարը, «Միջին Արեւելքի Զուիցերիա» ն նկատուող դրախտային երկրին՝ Լիբանանի մէջ:

Իւրաքանչիւր ողբերգ ինքնին բազմապատկուած սարսափ կը յառաջացնէ սահմոկեցուցիչ տեսարաններու ընդմէջէն: Թուելու համար մի քանին՝ նկուղներու մէջ մոմավառութիւնը, տուներու լրիւ փակ դռներն ու պատուհանները, ուրկէ կը յորդէին կեանքը, ձայները, խօսակցութիւնները, բաց պահելով ալ հիմա միայն մահուան դռները, այսինքն՝ գերեզմանները, փողոցներու մեռելային լռութիւնը, վախազու ամայութիւնը: Տակաւին՝ մեռել թաղելու խիստ վտանգաւոր կացութեան դիմաց՝ փողոցին մէջտեղ, ճարահատ, ստիպողական՝ կոտտացող սրտով զակկին կողմէ իր մօր դիակկին հրկիզումը, բարեսիրտ նպարավաճառ Սէմիլ Էլ Սուրիի, բանաստեղծ Քէմեր Խէյր Պէկի, իր ընտանիքի հաց ու պանիր գնելու ելած Ղալիին, խմբագիր Սէմիր Էլ Լաուզիին, Միքայէլ Թաւրիզեանի, Զօհրապ Քէշիշեանի եւ անմեղ անձերու առեւանգումը կամ տեղույն վրայ հրացանազարկ սպանութիւնը հրէշ զինեալներու ձեռքերով, չնչին մէկ տոկոսը կը ներկայացնեն տակաւին բիւրաւոր գոհերու եւ անյայտացածներու վիճակագրական ցուցակին վրայէն:

«Թոչուններն իսկ հեռացան», կը գրէ Զաւէն Գրիգորեան քերթուածներէն մէկուն մէջ, որովհետեւ ծառ չգտան թառելու այլ միայն մոխիր... Եւ այսպէս կ'երկարի շարքը անմարդկային արարքներու, որոնց նմանը, ահա, մեր օրերուն անգամ, յիսուն տարի ետք այդ արհաւիրքէն՝ կը շարունակուի աշխարհի անտարբեր աչքերուն եւ անգոր ձեռքերուն առջեւ՝ Արցախի, Ուքրանիոյ եւ Կազախի անասնային, սաթայէլական պատերազմներուն թաւալումով:

Կարելի չէ ջիշել պատմական հարցազրոյց մը, Երկրորդ Համաշխարհային Պատերազմէն ետք՝ «Պաղ պատերազմ»ի օրերուն, աթոմական ուժի հնարիչ գիտնական Ալպեր Այնշթայնի հետ:



- Ի՞նչ է Ձեր կարծիքը Երրորդ Համաշխարհային Պատերազմի մը հաւանականութեան մասին, հիմա որ գտնուած է հիւլէական ռումբը:

- Չեմ կրնար ենթադրութիւն ընել եւ ստոյգ պատասխան տալ այս հարցումին,- կ'ըսէ Այնշթայն,- սակայն կրնամ գուշակել որ Չորրորդ Համաշխարհային Պատերազմը տեղի պիտի ունենայ սուրբերով, նետերով, նիզակներով...

Եզրակացութիւն: Մարդ արարածը երբեք խելք պիտի չդնէ, դաս պիտի չառնէ պատմութենէն եւ հակառակ Մ.Ա.Գ.-ի եւ նման խաղաղութեան եւ ապահովութեան համար հիմնուած միջազգային կազմակերպութիւններու գոյութեան, դարձեալ պիտի բզբտէ, յօշոտէ, հիւլէացնէ, իր բնագոյին եւ սեփական շահերուն անձնատուր, ինչ փոյթ թէ աշխարհի կործանումով կը կործանի նաեւ ինք, գորտէն բարիք սպասող ու գետը ճեղքող կարիճին պէս, որովհետեւ «իր բնութիւնն է»...

Ափսոսալի՛ գուշակութիւն արդարեւ ու երբ կռահողը Այնշթայն մըն է, ալ որքան յոյս կրնաս կապել աշխարհի ապագային վրայ եւ լաւատես ըլլալ, երբ կոխը այսօր հոս է, վաղը հոն է եւ միւս օրը Աստուած գիտէ ո՛ր եւ ինչպէ՛ս, ինչպիսի՛ գերարդիական զէնքերով...

Վարդան Թաճեան

2 Յունիս, 2024

Նիկոսիա

ՎԱՀԱՆ ԿԱՐԱՊԵՏԵԱՆԻ

ԽՆԿԵԼԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

(Մահուան Ա. տարելիցին առիթով)

ԱԶՍ ԽՕՍՔը կը միանայ՝ սկզբունքային գաղափարական, նուիրեալ ազգային եւ պատուական հայորդի՝ Յունաստանաբնակ ՎԱՀԱՆ ԿԱՐԱՊԵՏԵԱՆԻ յիշատակը ըստ արժանւոյն ոգեկոչող հետեւեալ գրութեան յարգանքի արտայայտութեան:

Տասնեակ մը ամիսներ կը բաժնեն մեզ այն օրէն, երբ իր սիրոյ հանգանակ՝ արեւին, լոյսին, հարազատներուն եւ բարեկամներուն վերջին հրաժեշտը տուաւ յունահայ գաղութի արժանատր զուակներէն եւ մեզի հետ սերտ բարեկամ Վահան Կարապետեանը, խորունկ փոս մը թողելով ոչ միայն իր պարագաներուն այլեւ հոյլ մը սիրեցեալներուն սրտերուն մէջ:

Երբ առաջին անգամ բախտը բերաւ մեզ իրարու մօտ, տարիներ առաջ, դժուար չեղաւ ճանչնալ այս պատուական հայորդիին ներաշխարհը, ապրումները, գաղափարները, նպատակները, երազները: Այդ օրէն ալ հիմը դրուեցաւ սիրալիր, անկեղծ, վստահելի եւ մշտական բարեկամութեան մը, թէ՛ անձնական, թէ՛ ընտանեկան՝ փոխադարձ յարգանքի եւ հասկացողութեան բարձրագոյն աստիճանին վրայ: Բարեկամութիւն մը, որ չտժգունեցաւ



երբեք հակառակ Կիպրոս-Յունաստան հեռաւորութեան, յաճախակի հանդիպումներու սահմանափակութեան եւ կեանքի յարափոփոխ պայմաններուն:

Այո՛, գաղափարի մարդը եղաւ ան, բայց՝ ո՛չ ծայրայեղ, այլ՝ մաքո՛ւր, ազնի՛ւ՝ կուսակցութեան մը վեհ իտեալներուն եւ գերագոյն նպատակներուն երկիւղած հաւատքով տոգորուն: Գաղափարականը երբե՛ք չդարձաւ անձնական շահերու հետապնդման կամ պատեհապաշտութեան գործիք, որովհետեւ ճշմարտութիւնը եւ անկէ բխող սրտի ու խղճի հանդարտութիւնը աւելի ծանր կշռեցին իրեն համար: Լաւ հասկցած էր որ կեանքի մէջ գաղտնի գործելակերպն ու սուտը հաց կ'ապահովեն, բայց ինք միշտ հեռու մնաց այդ ծուռ ճամբայի փորձութենէն: Աչքին փուշ էր անարդարութիւնը՝ քաղաքական, ընկերային կամ առեւտրական բեմահարթակներու վրայ: «Շիտակ չէ», «Ասանկ պէտք չէ ըլլայ», կը կրկնէր յաճախ դժգոհական հակազդեցութեան մը մէջ, կը տագնապէր ազգային ցաւերով, մտահոգութիւններով եւ կը փորձէր միշտ անշահ, աւելորդ վիճաբանութիւններէ աւելի՝ սրամաքանական իր մօտեցումը համոզիչ դարձնել ճկունութեամբ, զգուշութեամբ, բարեխօսութեամբ եւ ի պահանջեալ հարկին, մթնոլորտի քաղցրութեան սիրոյն՝ բարձրաձայն կուշտ ու կուռ խնդրով, հաճելի զրուցակիցի, հարազատ հայրենասերի իր բնաւորութեան հաւատարիմ:

Խստապահանջ էր գործի մէջ, «տիսիբիլին»ի մարդ՝ շուկայի մէջ: Ձեռներէ՛ց, ճարպիկ, աշխատասէր, մարտահրաւերներու դիմաց կուրծք տուող ու պայքարող, որուն իբր արդիւնք գործարարութեան իր յաջողութիւնը զինք մղեց խոհեմ, իմաստուն ներդրումներ կատարելու՝ իր ընտանիքին ապագան ամուր ու ապահով սիւներու վրայ կառուցելու հեռանկարով, որպէսզի նիւթական կարիքներու գոհացման ծորակը չդադրի հոսելէ բնաւ, երբ օր մը ալ դադրէր աշխատելու իր կարողութիւնը եւ ստայնմ՝ եկամուտի աղբիւրը:

Կը ճանչնար դրամին բարիքները, բայց անոր գերին չէր դառնար բնաւ, հոն ուր կը խախտէր վարք ու բարք կը խախտէր նաեւ իր սրամաղրութիւնը: Չէր ներեր պարտականութեան թերացում, բայց իր այդ խստութեան ու հաստատականութեան ետին փխրուն սիրտ էր, թա՛րմ, կանա՛չ սիրտ, սիրտ մը, որ առատօրէն կը բաշխէր բոլորին, կը բաւէր որ յարգուէր մարդկայնական ոգիի, իտեալներու եւ սկզբունքներու տասնաբանեան:

Մետաղեայ հնչուն ձայնը հմայք մը ունէր, իսկ յունական առողանութեամբ մաքուր հայերէնն ալ՝ քաջողականութիւն մը, կարծես մրցումի ելած՝ Պոլսոյ մէջ խօսուող քաղցրահունչ հայերէնին: Որչափ կը սիրէր պատմել, խինդով, խանդով, ձեռքի պարային շարժումներով, նոյնչափ ալ կը սիրէր լսել պատմութիւն, վառվռուն աչքերը պտղսցնելով պատմողին վրայ: Հաւաքոյթներու ընթացքին մանաւանդ, հոն ուր ներկայ էր Վահանը, «լռութիւն»ը կը բացակայէր, գուարթախօսութեան, կատակներու եւ քահ-քահներու մթնոլորտին մէջ:

Վահանին համար սակայն կեանքի գերագոյն ապրումը իր ընտանիքի խորանին սպասարկումն էր, իսկական կողակիցի մը եւ օրինակելի հօր մը գանձերն ու արժէքները առատօրէն բաշխելով իր հոգեհատորներուն, սկսեալ՝ իր բարձի թանկագին ընկերոջ՝ Ազատէն, մինչեւ ձագուկները՝ Վերժին, Մարի Լու, Թաթիանա եւ թոռնիկներ: Վահանը



«Վահան» եղաւ ընտանիքին: Մեր ցանեց, սեր հնձեց: Եթէ ունեցաւ վիշտ, հոս ու հոն, մարդկային կեանքի ճակատագրային անխուսափելի իրադարձութիւն որպէս՝ իր հոգեկան խռովքը սակայն միշտ ալ փորձեց ծածկել իր լայն ժպիտին ետին: Երբեք չուզեց իր ներքին ցաւը աղաղակել եւ կիսել ընտանիքէն դուրս շրջանակի մէջ, պահեց իր արժանապատուութիւնը, անհատականութիւնը, բարօրութեան ու երջանկութեան անհրաժեշտ միախառնումը ու այդ սկզբունքին կառչած մնաց մինչեւ իր սրտին հուսկ տրոփը, նոյնիսկ եթէ վերջին ամիսներուն յիշողութիւնը ա՛լ սկսած էր դաւաճանել իրեն եւ քարէն ջուր սեղմող իր բազուկներն ալ այլեւս հրաժեշտ տուած կ'ըլլային անցեալի իր ֆիզիքական աշխուժութեան:

Անխորտակելի իր յոյսերուն փառած՝ Ազատին օրինակով երեք զաւակներն ալ Մելգոնեան դրկեց, հայեցի դաստիարակութեան շունչով տոգորելու եւ թրծելու զանոնք: Ճշմարիտ հօր մը պէս չէր ուզեր զլանալ իր պաշտելիներուն այն ինչ որ դժուարին մանկութիւն մը յաճախ չէ կրցած հատուցանել շատ շատերու մօտ:

Վահանի եւ Ազատի ամուսնութեան 50-ամեակին գեղեցիկ անակնկալով մը գաղտնաբար Աթէնք գացինք Ազատին Մելգոնեանի դասընկերուհին Միսին, տիկինս եւ ես տեղեակ պահելով միմիայն երեք դուստրերը: Տարեդարձի կարկանդակը պանդոկի սրահին մէջ կտրուած պահուն, յանկարծ մտանք ներս: Երբ նշմարեցին մեզ, հրաւիրեալներու շփոթահար աչքերուն առջեւ, ծայր առաւ ցնծութեան եւ յուզումի իլացուցիչ բացազանչութիւն մը որ երկար ատեն արձագանգեց դահլիճի պատերէն եւ մեզ պահեց իրարու փաթթուած, իբրեւ ազնուագոյն արտայայտութիւն մտերիմ ու անքակտելի բարեկամութեան:

Կարկանդակի մոմերը մարելէն շատ չանցած, ափսո՛ս մարեցաւ նաեւ Վահանի կեանքին մոմը, հաճելի անակնկալը վերածելով տխուր իրականութեան:

Հիմա որ չկայ ալ Վահանը, հոգին լոյսերու մէջ, կա՛յ սակայն ու վա՛ճ կը մնայ իր յիշատակը մեր սրտերուն մէջ, մեր մտածումներուն մէջ, սփոփարար ներկայութիւն մը՝ երբ անդենականէն մեզի յաւէտ կը սփռուի իր աչքի լոյսէն ու անթառամ ժպիտներէն մաղուող յիշատակներու մանանան:

ՎԱՐԴԱՆ ԹԱՇՃԵԱՆ

25 Մայիս, 2024

Նիկոսիա



ԱԿՆԹԱՐԹՆԵՐ

Բարոյականէն դէպի անբարոյականը ընդամենը մէկ քայլ է... Ազնուականութենէն դէպի անազնիւր՝ ընդամենը մէկ քայլ...: Նոյնն է հերոսի պարագային: Շատ անգամ



պատահեր է որ ռազմի դաշտին վրայ իր հերոսութեամբ փայլած անձնաւորութիւնը յետոյ դառնայ հակահերոս...: Բարոյականութիւնը եւ հերոսականութիւնը պահպանելն է դժուար:

.....

Ապագան հանրագումարն է ներկայ իրադարձութեանց, անոնց հանդէպ մեր վերաբերմունքի, մեր հակազդեցութեան, նոյնիսկ մեր անտարբերութեան...Մենք է որ մեր ներկայ արարքներով, մեր վարքագիծով՝ հաւաքական թէ անհատական, կը կերտենք ապագան քար առ քար, աղիւս առ աղիւս: Հետեւաբար, մեզմէ իւրաքանչիւրը պատասխանատու է ուղղակի թէ անուղղակի այն ապագային համար, որ գալու է:

.....

Ազգի ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹԵԱՆ մակարդակը պիտի բարձրացնել՝ դաստիարակութեամբ, գիտակցութեան արթնացումով եւ խորացումով, քանզի բարոյականութիւնն է որ կը պայմանաւորէ անոր ներկայ եւ ապագայ ընթացքի որակը: Ազգեր կամ հաւաքականութիւններ կրնան տնտեսական բարձր մակարդակի վրայ գտնուիլ, բարօր, բարեկեցիկ կեանք վայելել, սակայն եթէ կրողը չեն ԲԱՐՈՅԱԿԱՆ բարձր ԱՐԺԷՔՆԵՐՈՒԻ, դիւրաւ կը դառնան ՆԻԻԹԻՆ եւ ԻՆՉՔԻՆ գերի, կ'այլասերին, կը խաթարուին նկարագրով...: Ներկայ սպառողական քաղաքակրթութեան հիմնական խնդիրներէն է սա: Մարդկային ԱՐԺԱՆԱԻՈՐՈՒԹԻՒՆԸ նիւթական հարստութեան մէջ չէ բնաւ, այլ՝ անոր ապրած ու դաւանած հոգեւոր-բարոյական ԱՐԺԷՔՆԵՐՈՒՆ, որոնց ՎՍԵՄՈՒԹԻՒՆԸ ճշմարիտ չափանիշն է անոր ՄԵԾՈՒԹԵԱՆ:

.....

Մարդ էակին լաւագոյն վարձատրութիւնը ներքին հոգեկան գոհունակութիւնն է: Որեւէ բարի գործի, արարքի, ազնիւ վարքի գերագոյն հատուցումը կը զգաս սրտիդ խորը, որ կ'արձագանգէ ոգեկան ճշմարիտ երջանկութեան ապրումներով...Որեւէ այլ վարձատրութիւն, թէ գնահատանք չի կրնար հոգիդ լեցնել նմանատիպ երջանկութեամբ: Բանաստեղծ Վահան Թեքէեան պիտի ըսէր. «Ինչ որ գնաց ուրիշին, Վերադարձաւ անուշցած ու զօրացած, Հոգիիս մէջ մնալու յաւիտեան»...Երանի՛ կարենանք նման հոգեկան հարստութեամբ եւ լիութեամբ ապրիլ:

.....

Յանցանքները՝ եթէ ատենին չպատժուին, սխալները՝ եթէ ատենին չսրբագրուին, յայնժամ անոնք բարդ առ բարդ կուտակուելով կը դառնան անխորտակելի, կը դառնան ապրելաձէւ, ապրելաոճ, կեանքի բնական ընթացքը ճահճացնող ազդակ...

.....

Որքա՛ն պակասած է անկեղծութիւնը մարդկանց միջեւ: Դիմակահանդէսին մէջ, դեռ հոգիս կ'որոնէ այն մի քանի անեղծ մնացած հոգիները, որոնցմէ դեռ կը ստանամ ա՛յն լոյսն ու



ջերմութիւնը, որոնց միշտ ալ ծարաւի է հոգիս...Իսկ դիմակներէն հեռու կը մնամ, քանզի աւելի լաւ է առանձին մնալ, քան դիմակներու ետեւ պահուըտած մարդոց հետ յարաբերիլ...

.....

Որպէս ժողովուրդ, մեզի միշտ ալ պակասած է եւ կը շարունակէ պակսիլ՝ ՄԻԱՍԻՆ ԱՇԽԱՏԵԼՈՒ ԱՌԱՔԻՆՈՒԹՈՒՆԸ, ՀԵԶՈՒԹԻՒՆԸ, ԵՍԸ ՀԱԻԱՔԱԿԱՆ ՄԵՆՔԻՆ զիջելու ԽՈՆԱՐՀՈՒԹԻՒՆԸ: Կարծէք դար ու դարեր մեր սեփական ետերուն մէջ բանտարկուած, ինչպէս՝ մեր բարձրիկ սարերուն, մենք էապէս չենք կրցած միաբանուիլ, համագործակցիլ մեր հաւաքական նպատակներուն շուրջ...Իսկ պատմական այն օրհասական պահերուն, երբ կրցեր ենք ՀԱԻԱՔԱԿԱՆ ՈՅԺ դառնալ՝ ինչպէս ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻ մէջ, մենք կրցեր ենք ՀՐԱՇՔՆԵՐ գործել, գերազանցելով մենք զմեզ:

.....

Չեմ սիրեր ՄԻՏՔԵՐՈՒ ԲՈՆԱԿԱԼՈՒԹԻՒՆԸ: Չեմ սիրեր եթէ մարդիկ քեզմէ հեռանան, պարզապէս անոր համար որ իրենց գաղափարը տուեալ հարցին շուրջ քեզմէ տարբեր է, չեմ սիրեր երբ բարեկամդ յանկարծ կը նեղսրտի քեզմէ, պարզապէս անոր համար որ դուն չես բաժնէր իր տեսակէտը: Տակաւին, չեմ սիրեր երբ գաղափարներու տարբերութիւնը պատճառ կ'ըլլայ ոմանց, որ անվայել խօսքեր ըսեն հասցէիդ, հայիոյեն, չարախօսեն...ԶՈ՞ՐՆ ԱՍԵՄ, ԿԱՍ ԶՈ՞ՐՆ ԽՈՍՏՈՎԱՆԻՄ...Խօսելու համար ՄՏՔԻ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ մասին, նախ եւ առաջ ՄԵՆՔ գայն պիտի մշակենք մեր մէջ:

.....

Այնքան դժուար է ԿԱՂԱՊԱՐՆԵՐԷ դուրս մտածելը՝ անոնց համար մանաւանդ որ հատուածական-կուսակցական կարծրատիպերով են կազմաւորուած, անոնց համար, որ մանուկ հասակէն՝ իրենց մատղաշ ուղեղները դաստիարակուած- լուսացուած են շարունակ հատուածամոլ մտածողութեամբ: Չկայ ազգային փրկութիւն քաղաքական այդ կարծրատիպերէն անկախ: Այսպէս կը մտածեն անոնք յատկապէս ՍՓԻՒՔԻ իրականութեան մէջ, ուր դպրոցը, մամուլը, նոյնիսկ եկեղեցին, միշտ ալ գտնուած են հզօր ազդեցութեանը տակ կուսակցութեան մը: Ազատ եւ ստեղծագործ մտածողութիւնը էապէս կ'ենթադրէ չկաղապարուիլ որեւէ բանով:

.....

«Ազատութիւն» հասկացութիւնը չարաչար կը հռչակուի մեր ժամանակներուն, տուն տալով շատ անգամ սխալ մեկնաբանութեանց եւ ըմբռնումներու...Ազատութիւնը սանձարձակութիւն չէ երբեք, ոչ ալ անիշխանութիւն: Անիկա էապէս կ'ենթադրէ անհատական ու հանրային կարգապահութիւն՝ գործելու համար բարոյական սկզբունքներու եւ հանրօգուտ օրէնքներու սահմաններուն մէջ, այլապէս ազատութիւնը կրնայ դիւրաւ վերածուիլ ամբողջովին անպատասխանատու կամայականութեանց եւ նոյնիսկ բռնարարքներու...:

.....



ՄԵՆՔ-ի կերտումը ազգային գիտակցութիւն է:

ՄԵՆՔ-ի կերտումը չնչին ես-երէն զիջում է:

ՄԵՆՔ-ի կերտումը հեզութեան առաքինութիւն է:

ՄԵՆՔ-ի կերտումը ազգային-պետական մտածողութիւն է:

ՄԵՆՔ-ի կերտումը մեր հզօրութիւնն է:

ՄԵՆՔ-ի կերտումը մեր փրկութիւնն է:

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

ՔԱՌԵԱԿՆԵՐ



Յաղթելու համար, պիտի մաքառիս,
Պիտի պայքարիս անդուլ, հանապազ,
Ափսէի վրայ երբէ՛ք չի տրուիր
Յաղթանակներու դափնին շողափայլ:
.....

Քանի տաղեր ալ դեռ երկնեմ,
Չերկնած տաղիս կարօտ մնամ,
Ան կը պահէ երազս վառ,
Ոգիս արթուն, անթեւաբէկ:
.....

Տօթակէզ օր է, հրաշէկ լաւա է,
Երկնէն կը թափի, աշխարհ պարուրէ:
Բառերս նոյնպէս հուր ու կրակ են,



Գուցէ ջերմացնեն սիրտերը սառցէ:

.....

Միրոս կարծես վարդ մը ըլլար
Իր թերթերով բազմաբուրեան,
Թերթ առ թերթ ես բացի զայն
Անխտորէն ու շռայլաբար...

.....

Գերագոյն զարդ է անբասիր հոգին,
Որ ճառագայթէ դիրքերէն անդին,
Աթոռներէն փուճ որ կան ու չկան,
Հոգին քեզի հետ շողայ յաւիտեան:

.....

Ճակատաբաց ես ապրեցայ
Հաւատարիմ միշտ ես ինձի,
Տուրք չտուի փառքերուն սին,
Տգրուկներուն աթոռապաշտ:

.....

Անդնդախոր յոյզին առջեւ անչափ անգօր են բառերը,
Հոգոյն խորին խորխորատին անչափ տկար են բառերը,
Միտքի սլացքին համար անհուն անչափ սակաւ են բառերը,
Մարդը ինքը պիտի տքնի որ գտնէ իր ներաշխարհը.

.....

Գողգոթայի ճանապարհն է
Որ կը տանի ճշմարտութեան,
Պիտի տքնիս դուն հեւասպառ
Որ լուսահամն դուն ճաշակես:

.....

Ակնթարթ էր, եկաւ-անցաւ,
Հոգիիս մէջ դրոշմուեցաւ,
Ու որքան ալ քամին փչեց,
Չկրցաւ Լոյսն անոր մարել...

.....

Ե՞րբ արդեօք մենք ՄԵՆՔ պիտ'ըլլանք,
Բաժա՛ն-բաժա՛ն պիտի չըլլանք,
Ես-երո՛ւ տեղ պառակտուած,
ԱԶԳ պիտ' դառնանք հաւաքական:

.....

Հազար բառեր ալ դուն շարես



Վայելչօրէն ու պերճագեղ
Թէ քու հոգիդ դուն չդնես
Բաւերդ սին են խեցիի պէս:

.....

Գիշերէն ետք, լուսաբաց է,
Ձմեռէն ետք՝ զարնան արեւ,
Ցաւը կու գայ, կ'անցնի, կ'երթայ,
Լոկ սպին մնայ իբր յուշարար...

.....

Կեանքն է պայքար մը մշտատեւ,
Ոգիդ արթուն դուն պիտ' հսկես,
Որ թմբիրը քեզ չկլանէ,
Սուտն ու կեղծը քեզ չօրօրէն:

.....

Քա՛ր է հողդ, քա՛ր է լեռդ, բայց դուն քաղցրիկ ու քնքշայտդ,
Մօր մը նման ամուր կանգնած, զաւակներուդ հօր թիկունք,
Սիրտդ փխրուն ճիշդ անոր պէս, արտասուքով սիրագեղուն,
Արտասուք որ պոռթկայ լաւա թէ թշնամին մտնէ մեր տուն:

.....

Մեր ամրոցին դուռը բացողն
Եղեր է միշտ մատնիչ Յուդան,
Որ դեռ գործէ անխիղճ սրտով,
Իր սին շահին է հըպատակ...

.....

Միտքեր դրի ես քովէ-քով,
Տաղ հիւսեցի լուսագորով
Եւ զարմացայ՝ ուրկէ՞ եկան
Այդ միտքերը անեզրական:

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ